№ 150 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՅՈՒԼԻՍԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՅՈՒԼԻՍԻ № 150

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 6 ռուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։ Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Թեմական դպրանոցի
համար հարկաւոր են
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ռուսաց լեզուի և գրականութեան	22 դաս
Լատիներէնի	12 դաս
Ընդհանուր և ռուսաց պատմութեան	12 դաս

ԴԱՍԱԳԻՆՆ Է 60 ՌՈՒԲԼԻ

Դիմել դպրանոցիս տեսչին մինչև օգոստոսի 15-ը։ Ռոճիկը պիտի ստանայ պաշտօն մտնելու օրից։
Տեսուչ՝ Ե. ՇԱՀԱԶԻԶ
(հ.) ա. 650. 6—5

ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА

662. ա. (հ. հ. կ.) 100—12

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22.
Ելիզավետինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(ե. հ. կ.) ա. 243. 100—42

ДЕШЕВО
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

283. ա. (հ.հ.կ.) 50—41

ԿԱՐՍԻ հայոց ծխական երկսեռ երկդասեան դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ

18 դասի և աւագութեան համար 1000—1500 ռուբ. ռոճիկ։ Ցանկալի է, որ աւագ ուսուցիչը լինի ռուսագէտ։ Խնդիրների հետ պէտք է ներկայացնել աւարտման վկայականը և կամ նրա պատճէնը։ Խնդիրների ընդունելութիւնը մինչև օգոստոսի 1-ը։
Դիմել հոգաբարձութեան։
(ա. օ.) ա. 719. 6—1

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսի սարսափելի հրդեհը ճարակելով ամբողջ թաղեր և փլատակելով հազարաւոր տներ, տարել է մարդկային զոհեր և պատճառել է միլիոնաւոր կորուստներ ազգաբնակութեան բոլոր տարրերից և ի միջի այլոց հայերից։

Աղէտը ընդհանուր է և օգնութիւն պէտք է տրվի բոլոր վնասվածներին։

Եւ անկասկած՝ Թիւրքաց կառավարութիւնը կը շտապէ մեղմացնել աղէտի կսկիծը և ծանրութիւնը՝ յատկացնելով առատ նպաստներ արկածեալներին։

Ամառվայ եղանակը փոքր ինչ թեթեւացնում է տառապեալների վիճակը և կարելի է դարձնում ժամանակաւոր ապաստարան տալ մարդկանց վրաններում, մինչև որ միջոցներ մշակվեն վերականգնելու հրկիզեալների տները և փոքր ի շատէ պատսպարված կերպով մտնելու աշնանային և ձմեռվայ շրջանների մէջ։

Հասարակութեան շրջաններում նըպաստներ կը ժողովվեն և՛ ընդհանուր կերպով և՛ մասնաւորապէս՝ այս ու այն համայնքների համար։ Թիւրքերը, հայերը, յոյները, հրէաները և եւրոպացիները, որոնք ապրում են աղէտին ենթարկված արուարձաններում՝ կը ստանան օգնութիւն հանրային գումարներից և իրանց ցեղակիցների կամ կրօնակիցների օժանդակիչ մարմիններից։

Անշուշտ՝ համաճարակ աղէտի դիմաց բոլոր վնասվածները միահաւասար կարօտ են օգնութեան և պէտք է ստանան օժանդակութիւն, բայց իրականութիւնը ցոյց է տալիս, որ մասնաւոր նուիրատուութիւնների և հասարակական նպաստների մի մասը յատկացվում է վնասվածների այս ու այն որոշ համայնքին։

Եթէ պետական և մասամբ հասարակական նպաստների վերաբերութեամբ կարելի է պահանջ դնել, որ նրանք անխտիր բաժանվեն բոլոր արկածեալներին, նոյնը շատ դժուար է մասնաւոր նուիրատուութիւնների համար։ Եւ դնել մի այդպիսի պահանջ՝ յաճախ համահաւասար կը լինի սպանել նուիրատուութիւնների հոսանքը դէպի օգնութեան գանձանակը։

Մեր հասարակութիւնը, անկասկած, արձագանք կը տայ Կ. Պոլսի արկածեալների սոսկալի վշտին և կը ցանկանայ իր կողմից թեթեւացնել նրանց վիճակը որոշ օժանդակութեամբ։

Յատկապէս հայ արկածեալներին օգնելու կարող է ծառայել Թիւրքահայերին Նպաստող Հանգանակիչ Մասնաժողովը, որը արտօնութիւն ունի դեռ մի տարի էլ գործելու մեր երկրում։

Հանգուցեալ կաթողիկոսը դիմել էր ռուսաց կառավարութեանը և թոյլտւութիւն խնդրել շարունակելու Մասնաժողովի գործունէութիւնը։ Այդ թոյլտւութիւնը ստացվեց ներկայ տարվայ գարնանը։ Եւ Մասնաժողովը կարող է գործել ներկայումս, օգտվելով իր ստացած իրաւունքից։

Մենք յուսով ենք, որ Հանգանակիչ Մասնաժողովի անդամները շուտով մի նիստ կը գումարեն և կը ձեռնարկեն անմիջական գործունէութեան։

Ա. Քալանթար

ՀՐԴԵՀԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Կ. Պոլիս.—Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն այրվել է 7000 շինութիւն։ Հաշիւն աւարտված չէ։ Վնասը մօտ 3 միլիոն ֆունտ է։ Մարդկային զոհերի թիւը չէ համարված։ Հրդեհը ձգելու մէջ կասկածով կալանաւորված են 60 մարդ՝ մասամբ յոյներ, մասամբ քիւրդեր։ 15 քիւրդեր կալանաւորված են հրդեհի ժամանակ քրիստոնեայ կանանց վրա յարձակվելու համար։ Հրդեհը Ղալաթիայում շարունակվում է։ Այրվել է 1000 տուն։ Քամին կրակը քշում է Ստամբուլի վերին թաղերի կողմը։

Քաղաքում տարածված են լուրեր յեղափոխական շարժման մասին։ Սպասվում են լուրջ դէպքեր։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Լօնդօն.—Համայնքների պալատ։ Համապատասխան հարցին Մակ-Կիննոն-Վուդը պատասխանեց. «Այսօր վաղաժամ է խօսել այն մասին, թէ ինչպիսի ազդեցութիւն կը գործէ պարսից նախկին շահի վերադարձը ներքին անկարգութիւնների վերսկսման վրա»։

Այն հարցին՝ թէ ինչպէս են ծախսվել Անգլիայից ստացվող փողերը, Չերնօգորիայում ալբան ապստամբների պահպանութեան վրա, Մակ-Կիննոն-Վուդը պատասխանեց. «Ցետինիէում պաշտօնավարող բրիտանական դեսպանն անգամ չէ կարող բաժանել փողերը բայց բոլոր միջոցներով կօժանդակէ ամեն մի համապատասխան կազմակերպութեան»։

Անսովոր աղմուկ և գրգռում առաջ եկաւ veto-ի օրինագծի վիճաբանութիւնների ժամանակ։ Ասկվիթին, որ տեղից բարձրացել էր իր նամակի առիթով բացատրութիւն տալու համար, օպպօզիցիան աղաղակեց. «Դաւաճան, վախկոտ»։ Պատասխան աղաղակները մինիստրական աթոռներից աղմուկի հետ թոյլ չը տուին Ասկվիթին խօսել։ Նա վերջապէս նկատեց, որ չէ կամենում ստորանալ և խօսել չանսացող պալատի անդամների հետ։

Մինիստրական կողմնակիցները Ասկվիթին ովացիա սարքեցին։ Բալֆուրըն ասաց, որ Ասկվիթը խորհուրդ կը տայ թագաւորին դիկտատօրութիւն մտցնել։ Գրէյը առաջարկեց նիստը յետաձգել, բացատրելով որ այսօրինակ պայմաններում ոչ մինը մինիստրներից չի կամենայ պրեմիէր լինել։ Աղմուկը շարունակվում է։ Նիստը յետաձգվեց։

Ասկվիթի դէմ յարուցած ցոյցը, որի նմանը երբէք չէ եղել համայնքների պալատի նիստում, առաջ է բերում ընդհանուրի պարսաւանքը։ Ունիօնիստները ուղերձ են ստորագրում, որի մէջ ցաւակցութիւն է յայտնում Ասկվիթի վերաբերութեամբ թոյլ տրված անձնական անքաղաքավարութեան առիթով։

Մակ-Կիննօն-Վուդն ասաց, որ բրիտանական կառավարութիւնը շատ լաւ գիտակցում է Ագադիրի գոյութեան կարեւորութիւնը իբրև բաց նաւահանգիստ և առիթը բաց չի թողնի պնդել դրա վրա մեծ պետութիւնների առաջ։

Ասկվիթը, Լլօյդ-Ջօրջը և Գրէյը, օգտվելով այն հանգամանքից, որ թագաւորը Պարիզումն է գտնվում, արտաքին գործերի մինիստրութեան մէջ խորհրդակցեցին Մարոկկոյում տիրող դրութեան մասին։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲԱԼԿԱՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Կ. Պօլիս.—Ցուսինէից հաղորդում են, որ չերնօգորցիները մալիսօրների հետ միասին յարձակվել են թիւրքերի վրա և յետ են մղվել 2 ժամ տևած կռւից յետոյ։

Պրագա.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Ցէտինիէից, որ պաշտօնապէս հերքվում է այն տեղեկութիւնը, երբ չերնօգորական թագաւորը դիմել է մեծ պետութիւնների ներկայացուցիչներին խնդրելով Բ. Դրան առաջ քայլեր անել մալիսօրներին նոր զիջումներ անելու մասին։ Ընդհակառակը մալիսօրները բոլորովին անզօր են անհաւասար կռւում և խնդրում են դիւրութիւններ տալ իրանց, որպէսզի հայրենիք վերադառնալ կարողանան։ Չերնօգորիան անկեղծօրէն համակարծիք է այդ ցանկութեան։

Ուսկիւբ.—Տեղս եկած Էդհէմ-փաշայի ձեռքը անդամահատեցին։

Ալբանական հրոսակախմբերը ամեն օր յարձակվում են զինուորական պահակախմբերի վրա։

Պրիզրէն-Դիակօվօ ճանապարհը անանցանելի է մանր զօրամասերի համար։ Պրիզրէն-Սկիւտար ճանապարհը գրաւված է միրիդիտների խմբերով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Պետերբուրգ.—Պալատի մինիստրի հեռագիրը. «Ֆինլանդական գեներալ-նահանգապետ Զէյնը վերջացրեց իր ծառայական ճանապարհորդութիւնը Ֆինլանդիայում և յուլիսի 12-ին բաղդ ունեցաւ ներկայանալ Թագաւոր Կայսրին «Շտանդարտ» զբօսանաւի վրա և ընդունվեց զեկուցում տալու։ Միաժամանակ Նորին Մեծութեանը բաղդ ունեցաւ ներկայանալ Վըբօրգի նահանգապետը։ Երկուսն էլ ապա արժանացան ներկայանալու Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնային և հրաւիրվեցին զբօսանաւի վրա բարձրագոյն նախաճաշի»։

Պետերբուրգ.—Յուլիսի 12-ին, Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Իօսիֆօվնայի մահվան 20-րդ. օրը կատարվեց հոգեհանգիստ։

Սամարա.—Իլիօդորը 1800 ուխտաւորների ուղեկցութեամբ եկեղեցական թափօրով անցաւ դէպի նահանգապետի տունը, ուր երգվեց ազգային հիմնը։ Ողջոյններ փոխանակելուց յետոյ, Իլիօդորը շնորհակալութիւն յայտնեց նահանգապետին եկեղեցական թափօրը թոյլ տալուն համար։ Ամբողջ ամբոխը լիակատար կարգուկանոնով դիմեց դէպի Իվերի վանքը, որտեղից վերադարձաւ նաւահանգիստ՝ Սարովի անապատը երթալու համար։

Բակօնիչի.—Եկաւ յունաց թագաւորը։

Սանտանդէր.—Ալֆօնս թագաւորը մեկնեց Անգլիա։

Գլազգօ.—Բանւորների գործադուլը նաւաշինարաններում վերստին սկսվեց։ Բանւորների մեծ մասը կենտրոնական կոմիտէի պատուէրով դադարեցրեց աշխատանքները։

Ամստէրդամ.—Սղոցագործարաններում աշխատանքները վերսկսվեցին։ Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ գործադուլը վերջացել է։

Տօկիօ.—Լրագիրների ասելով, Եապօնիան բանակցութիւններ է սկսել Միացեալ-Պետութիւնների հետ 1908 թ. Խաղաղ Ովկիանոսի վրա status quo-ն պահպանելու մասին կապված համաձայնութիւնը զարգացնելու մասին։ Ազգային կուսակցութիւնը պնդում է ուժեղացնել նաւատորմը ի հաշիւ զօրքի և միւս վարչութիւնների։

Պրագա.—Չեխական լրագիրները դատապարտում են Էրենտալին նրա համար, որ նա չը պաշտպանեց Պրուսիայից աքսորված չեխ բանւորին, և պահանջում են արտաքին գործերի մինիստրութիւնից եռանդուն պաշտպանութիւն Պրուսիայում բնակվող չեխերին։

Վիէննա.—Ամբողջ Աւստրո-Ունգարիայում սաստիկ շոգեր են։ Ամեն օր տեղեկութիւններ են ստացվում արևահարութեան դէպքերի մասին։ Սոսկալի շոգեր են նաև Հարաւային Չեխիայում։ Լինում են մահացութեան դէպքեր։

ՄԱՐՕԿԿՕՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Բէրլին.—«Բրեմէն» յածանաւը պատուէր ստացաւ անմիջապէս գնալ Պօրտ-օ-Պրէնս՝ գերմանական շահերը պաշտպանելու համար։

Վօլֆի գործակալութիւնը հաղորդում է, որ Վիլհէլմ կայսրը յուլիսի 15-ին գալու է Սվինէմիւնդէ, ուր կանցկացնէ մի քանի օր, յետոյ կը դիմէ զօրքերի վարժութիւնների տեղը։

Դիւսէլդօրֆ.—Պանգերմանական դաշնակցութեան լիազօրների ժողովը բողոք յայտնեց այն կարծիքի դէմ, թէ Գերմանիան կարող էր բաւարարութիւն ստանալ կօմպենսացիայով Մարոկկոյից դուրս։ Դաշնակցութեան հրատարակած բրօշիւրով պահանջվում է, որպէսզի Մարոկկոյի հարաւային մասը միացվի գերմանական գաղթատեղիներին։

Սան-Սեբաստիան.—Արտաքին գործերի մինիստրը երկար խորհրդակցեց ֆրանսիական դեսպանի հետ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 յուլիսի

Թէհրան.—Մէջլիսի կազմից նոր կաբինէտ կազմելու հետ միասին, պետական խնամակալի հաւանութեամբ կազմվեց առանձին մասնաժողով կառավարութեան և պարլամենտի միջև կապ պահպանելու համար։ Նրան շուտով միացան կողմնակի անձինք ծայրայեղ նացիօնալիստներից։ Մասնաժողովը իւրացրեց հասարակական ապահովութեան գերագոյն կօմիտէի ֆունկցիաները և միջամտում է բոլոր կառավարական կարգադրութիւններին՝ ղեկավարելով իրան անհաճոյ անձանց ձերբակալութիւնները։

Կաբինէտը հրաժարական տուեց, որը ընդունվեց։ Նոր կաբինէտը ըստ երևոյթին կը կազմվի ծայրայեղ տարրերից։ Այժմ կառավարութիւնը իրապէս բացակայում է։ Դրութիւնը չափազանց բարդացել է։ Ներկայ րէժիմից դժգոհների թիւը աճում է։

Ուրմիա.—Նահանգապետի կարգադրութեամբ և անջումանի համաձայնութեամբ գլխատվեց քաղաքային հրապարակի վրա սպանութեան ժամանակ ձերբակալված աւազակ Խան-Ալին։

Թաւրիզ.—Որպէսզի կարելի լինի ժողովրդից գաղտնի պահել Մահմէդ-Ալիի Պարսկաստան վերադառնալը, արգելված է արտասանել նրա անունը։ Խաբտոտները ենթարկվում են բանտարկութեան, նրանցից առնվում է դրամական մեծ տուգանք։

Թաւրիզ.—Զեղջատու բանկի բաժանմունքը բացեց ռուսական ապրանքների նմուշների մշտական ցուցահանդէս, որ գրաւում է ընդհանուրի ուշադրութիւնը և մեծ հետաքրքրութիւն է յարուցանում Թաւրիզի վաճառականութեան մէջ։ Ցուցահանդէսը այցելել են 10,070 մարդ։

(Լրագիրներից)

Թէհրան.—«Р. Сл.»-ի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել պարսից արտաքին գործերի մինիստրութեան մէջ աչքի ընկնող պաշտօն ունեցող մի անձի հետ, որ յայտնել է հետևեալը.

«Թէ որտեղից եկաւ Մահմէդ-Ալին, մենք չը գիտենք, բայց այն իրողութիւնը, որ նրան այստեղ է բերել ռուսական շոգենաւը, նաև այն, որ ռուսները մեզ չօգնեցին գահընկէց շահի գործակալներին բռնելու, չը նայած որ նրա՝ Պարսկաստանից մեկնելու մասին արձանագրութիւնը ստորագրել էր նաև Ռուսաստանի ներկայացուցիչը, ստիպում է մեզ դիմել ռուսաց կառավարութեանը առանձին առաջադրութեամբ։ Յուլիսի 8-ին մենք Պետերբուրգի կաբինէտին նոտա ուղարկեցինք, որի մէջ ի միջի այլոց յայտնում ենք, թէ, համաձայն յիշեալ արձանագրութեան, նախկին շահը այսուհետև զրկվում է կենսաթոշակից, նաև թէ նա և նրա մերձաւորները, որոնք Պարսկաստան են մտել, զրկվում են օտարազգի պետութիւնների դեսպանատներում բաստ նստելու իրաւունքից։ Բացի այդ՝ մենք կը յայտնենք ռուսաց կառավարութեանը, որ ռուսաց կողմից օգնութիւնը Պարսկաստան գաղտագողի մտած նախկին շահին և նրա կողմնակիցներին՝ Ռուսաստանի վրա պարտականութիւն կը դնէ վճարել այն վնասները, որ կը կրէ Պարսկաստանը Մահմէդ-Ալիի պատճառած անկարգութիւններից»։

Թէհրան.—Արտաքին գործերի մինիստրութեան մէջ «Р. Сл.»-ի թղթակցին յայտնել են հետևեալը.

«Ահա քանի օր է, որ մի քանի նշաններից մենք կարող էինք գուշակել, որ էկս-շահը ինչ-որ պատրաստութեան մէջ է։ Վիէննայի մեր դեսպանը մեզ տեղեկացրեց, թէ Մահմէդ-Ալին հեռացել է Օդեսսայից և երևացել է Բադէնում խուզված միրուքով և Խալիլ Բաղդադի կեղծ անուան տակ։ Բադէնում հէնց այդ ժամանակ գտնվում էր ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովը։ Դրանից յետոյ շահի հետքը կորչում է։

«Մի փոքր անց՝ Բաքուի պարսկական հիւպատոսը յայտնեց մեզ, թէ այնտեղ են եկել Մահմէդ-Ալիի երեք գործակալները նամակով և զէնքով։ Հիւպատոսը դիմեց ռուսաց իշխանութիւններին՝ խնդրելով կալանաւորել այդ մարդկանց և գրաւել թղթերը։ Մենք Թեհրանում ևս խնդրեցինք ռուսաց դեսպանին մեզ աջակցել։ Վերջինս պատասխանեց, թէ, ի նկատի ունենալով որ պարսից կառավարութիւնը վերջերս ուղղակի չէ ցանկանում ընդառաջ գնալ ռուսաց կառավարութեան առաջարկներին առևտրական յարաբերութիւնների նկատմամբ, ինքը հրաժարվում է աջակցել Պարսկաստանին որևէ բանում։

«Սկսվեցին բանակցութիւններ անգլիական դեսպանի հետ, որը խոստացաւ իմանալ Լոնդոնի կարծիքը։

«Մինչ այդ՝ էկս-շահի մարդկանց աջողվեց Բաքուից գնալ Պետրովսկ, ուր նրանք տեսակցեցին թիւրքմէնների Ջաֆար-բայ ցեղի հետ։ Միւս կողմից Էմիր-Բահաթուրը յարաբերութեանց մէջ մտաւ շահսէվանների հետ, իսկ Սալթանէ-ուդ-Դովլէն Քիւրդստանում իրան յայտարարեց Մահմէդ-Ալիի կողմնակից։ Այժմ էկս-շահի ինտրիգները պսակվեցին նրա գալստեամբ ռուսական «Խրիստոֆոր» շոգենաւով» («Կովկաս և Մերկուրի» ընկ.)։

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Թաւրիզ, 7 յուլիսի

Մի քանի տարուց ի վեր Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում հիմնված ռուսաց փոխատու բանկի ճիւղը, ինչպէս ըմբռնած, սպեկուլացիայի նուիրված բանկային հիմնարկութիւն չէ, որպիսին է անգլիական կայսերական բանկը մեր երկրում, այլ նա, բացի քաղաքական բնոյթ կրելուց որոշ չափի, պէտք է զարկ տար նաև Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրական-տնտեսական զարգացմանը փոխադարձաբար, մեծապէս նպաստելով անշուշտ այն ձեռնարկութեանը, որով Պարսկաստանը սպառող և արդիւնաւէտ շուկայ պէտք է դառնար ռուսական ինդուստրիայի և ուրիշ արտաքին արդիւնաբերութիւնների համար։

Վերջին 30—40 տարիների ընթացքում ռուսական մանուֆակտուրային և այլ արդիւնաբերութիւնների ներմուծումը Պարսկաստան՝ առաւել հիւսիսային մասը՝ Ատրպատական համեմատաբար մեծ չափեր է ընդունել, սակայն այն հաւանական քանակութեան վրա կանգնած չէ եղել, որպիսին կարելի էր և սպասելի էր, եթէ միայն գործը դրված լինէր հմուտ և գիտակցական հիմքերի վրա և ճարտար ձեռքերի մէջ։ Մինչև հիմա կատարված մրցումը բաւարար հետևանքի չէ յանգել, եթէ բաղդատութեան դնենք ռուսական արդիւնաբերութիւնների ներմուծումը Պարսկաստան աւստրիական, գերմանական և անգլիական ներմուծումների հետ։

Այս տարվայ մարտ ամսին՝ Պարսկաստանի ռուսաց փոխատու բանկի ճիւղի բոլոր տեսուչները հրաւիրվեցին Պետերբուրգ՝ որոշ գործառնութիւնների մասին խորհրդակցութիւն կատարելու. ի միջի այլոց ուշադրութիւն ընծայված է անկասկած ռուսական արդիւնաբերութեան ներմուծման գործին, որի հետևանքով՝ Թաւրիզում ռուսաց բանկի շինութեան մէջ բացվել է «ռուսական ապրանքների ցուցահանդէս»։ Ռուսաց կայսերական բանկը յայտարարել է իր ժամանակին բոլոր գործարաններին, որ նմուշներ ուղարկեն Թաւրիզի ցուցահանդէսը։ Ամենայն սեռի և տեսակի ապրանքներ կը մատակարարվեն յաճախորդներին բուն տեղի ֆաբրիկայի գնով՝ հաշուելով ի հարկէ բուն ճանապարհածախսը։ Կրկնակօշիկ պատրաստող «Проводникъ» ֆիրմայի ներկայացուցիչը շրջում էր Պարսկաստանի քաղաքները յայտնի կարգադրութիւնների համար. տեսնելով ցուցահանդէսը՝ իր ֆիրմայի ապրանքների ամբողջ գործը յանձնեց նրան։ Ես անձամբ այցելեցի ցուցահանդէսը և հիացայ տիրող կարգ ու կանոնի վրա։ Ցուցահանդէսի ղեկավարութեան գործը յանձնված է հայազգի՝ գործին շատ հմուտ և փորձառու Աւագ խան Աւագեանցին, որ երկար ու ձիգ տարիներ պարապելով ընդարձակ վաճառականութեամբ՝ շատ լաւ ծանօթ է երկրին, առևտրական կեանքին և մանաւանդ ապրանքների այն տեսակներին, որոնք արագ սպառում կունենան Պարսկաստանում։

Թաւրիզի «ռուսական ապրանքների ցուցահանդէսը», ինչպէս խիստ նպատակայարմար և խելացի մտածված հիմնարկութիւն, իր գոյութիւնը պարտական է Թաւրիզի ռուսաց բանկի կառավարիչ պ. Անաստասիեւսկիի մտածութեան և ջանքերին։ Նա գնահատելի անձն է, ֆինանսիստ և խոր ուսումնասիրող՝ վերաբերութեամբ տնտեսական-արդիւնաբերական գործի բարգաւաճման՝ Պարսկաստանում։

Առևտրական հասարակական կարծիքը շատ նպաստաւոր է դէպի սկսված ձեռնարկութիւնը, և արդէն փորձերը ցոյց են տալիս, որ գործը խոստանում է արդիւնաշատ ապագայ։

Ոչ մի պատճառ չը կայ գործի յետամնացութեան համար. մինչև Թաւրիզ հաղորդակցութեան ճանապարհները կանոնաւոր են, նոյնը կարելի է ասել և միւս սահմանածայրերի համար։ Մնում է միայն այն, որ Պարսկաստանի վաճառականները օգուտ քաղեն արդէն կառուցված հիմնարկութիւնից, եռանդուն աջակցութիւն ունենան, գործեն, օգտվեն այն հաստատութիւնից, որ իրանց առաջ դրել է առաջընթաց լինելու հարթ և դիւրին մի ուղի դէպի տնտեսական բարելաւումը։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԸՆՏՐՎԵՆ

Մեր մամուլի մէջ լոյս տեսան լուրեր, թէ իբր օրէնքի կողմից թոյլ տըրված չէ առաջնորդական ընտրութիւններ կատարելը, և որ իբր թէ այս պատճառով՝ Թիֆլիսի թեմի համար այլևս առաջնորդ չը պիտի ընտրեն, այլ վեհափառն իր կողմից պիտի առաջարկի... «Մշակը», արտատպելով իր համարներից մէկի մէջ այդ լուրը, իր կողմից անհաւատալի էր համարել այն։

Եւ պէտք է այն իսկապէս համարել անհաւատալի, որովհետև օրէնքի կողմից ընտրութիւնը ոչ միայն պարզապէս չէ արգելված, այլ աւելի շուտ պահված է. բայց՝ ցաւ ի սիրտ՝ պիտի ասեմ, որ մինչև 1906 թիւը մեր հայրապետների կողմից չէ եղել այն գործադրված։

Դիմենք այն օրէնքին, որ «Պոլոժենիէ» անունով տրված է մեր եկեղեցուն։

«Հայ լուսաւորչական եկեղեցու ընդհանուր իրաւունքներ և արտօնութիւններ» վերնագրով առաջին գլխի մէջ 1111-դ յօդուածով (հրատ. 1896 թ.) շեշտված է որ՝ «Հայ եկեղեցու աստուածպաշտութիւնը և հոգևոր գործերի կառավարութիւնը պատկանում է հոգևորականութեանը սոյն եկեղեցու օրէնքների և աստիճանակարգութեան հիման վրա»։ Ուրեմն մեր եկեղեցու օրէնքները պետութեան կողմից ոչ միայն ճանաչված են, այլ և պետութիւնը օրէնսդրապէս պարտաւորած է մեր հոգևորականութեանը՝ մեր եկեղեցու գործերը կառավարել մեր եկեղեցու օրէնքների հիման վրա։ Մեր բոլոր քայլափոխումների մէջ սա պիտի լինի մեր ուղեցոյցը, մեր ղեկավարը։

Սրանից պարզապէս պէտք է եզրակացնել, որ ամեն մի դէպքում, երբ «Պոլոժենիէն» յատուկ յօդուածով որևէ խնդրի կամ գործողութեան նկատմամբ դրական կամ բացասական որոշ ցուցմունք չունի, մեր եկեղեցու օրէնքները պիտի պարզեն մթութիւնը, անորոշութիւնը։

Ամենքիս համար միանգամայն անվիճելի է, որ մեր եկեղեցին պահած է առաքեալներից սահմանված ընտրական հիմունքները և որ մեր եկեղեցին իր ընտրութեամբ է առաջնորդներին պաշտօնի հրաւիրել։

«Պոլոժենիէն» այս՝ մեր եկեղեցու օրէնքների կողմից սկզբից ի վեր ընդունված ու գործադրված սկզբունքի դէմ յատուկ արգելող յօդուած չունի։ Ուրեմն ոչ մի պատճառ, ոչ մի հիմք չը կայ նոյնիսկ ենթադրելու, թէ առաջնորդների ընտրութիւնը «Պոլոժենիէի» հակառակ է։

«Պոլոժենիէն» առաջնորդների պաշտօնի մէջ մտնելու նկատմամբ իր 1169-դ յօդուածով սահմանում է. «Հայ լուսաւորչական եկեղեցու թեմակալ առաջնորդները նշանակվում են Թագաւոր Կայսրից սոյն դաւանութեան հոգևոր կարգաւորների միջից։ Նրանք կարգվում և արձակվում են Բարձրագոյն հրամաններով։ Պաշտօնի մըտնելիս նրանք հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան երդում են ուտում»։

Ցօդուածիս այս ձևի խմբագրութիւնը թարգմանվել և ընդունվել է այնպէս, իբր թէ առաջնորդների ընտրութիւնը արգելված է։ Այսպէս են թարգմանել ու հասկացել սինօդի պրոկուրօրները, այսպէս են ընդունել ու հասկացել մեր ոչ ռուսագէտ և և ոչ օրէնսգէտ կաթողիկոսները։ Այսպէս է ճանաչվել ու գործադրվել ռուսահայ և պարսկահայ մեր կեանքի մէջ մինչև Խրիմեան Հայրիկի օրերը։

Ցօդուածիս այսպէս ըմբռնվելու և գործադրվելու պատճառներից ոչ աննշան պէտք է համարել այն հանգամանքը, որ մեր կաթողիկոսներին առանձնապէս դուր է եկել այդ անձնիշխանական իրաւունքը։ Սրանք ոչ միայն չեն զգացել այդպիսի ըմբռնողութեամբ այդ յօդուածի անհարազատութիւնը մեր եկեղեցու ընտրական առաքելաւանդ սկզբունքի նկատմամբ, այլ և այդ ըմբռնողութիւնը տարածել են նաև ռուսական սահմաններից դուրս՝ պարսկահայերի ևս վերաբերութեամբ։ Միայն Խրիմեան Հայրիկն էր, որ 1906 թւից շատ առաջ, դարիս հէնց սկզբից պարսկահայ առաջնորդական ընտրութիւնը վերադարձրեց ժողովրդին։

Սակայն երբ մի փոքր ուշադրութեամբ կարդանք «Պոլոժենիէի» միւս յօդուածները, կը տեսնենք, որ վերը ընդգծած «նշանակվում են» խօսքը գործ է ածվում «Պոլոժենիէի» մէջ բնաւ բնաւ հեռու մեր եկեղեցու առանձնայատուկ իրաւունքը վերացնելու մտքից։

«Պոլոժենիէի» 1204-դ յօդուածի մէջ սրբազնագործ պաշտօնեաների համար ևս գործ է դրված՝ «նշանակվում են թեմակալ առաջնորդներից» դարձուածքը, բայց այդ պաշտօնեաների ընտրութիւնը մինչև այսօր էլ կատարում է ծուխը։

«Պոլոժենիէի» 1126-դ յօդուածի մէջ կաթողիկոսի համար ևս գործ է դրված՝ նոյն «նշանակվում է Թագաւոր Կայսրից» դարձուածքը, բայց ընտրութիւնը կատարում է հայ ազգը։

Ուրեմն Թագաւոր Կայսրը նշանակում է կաթողիկոս՝ ազգի կողմից ընտրված երկու կարգաւորներից, թեկնածուներից մէկն ու մէկին։ Հետևապէս «նշանակել» բայը չէ վերացնում ընտրութիւնը։

Թեմակալ առաջնորդները նշանակում են սրբազնագործ պաշտօնեաներ՝ ծխի կողմից ընտրված տիրացուներից, թեկնածուներից։ Հետևապէս այս դիպուածում ևս «նշանակել» բայը չէ վերացնում ընտրութիւնը։

Եւ այսպէս, «նշանակել» բայի իմաստը «Պոլոժենիէի» մէջ շատ պարզ կերպով գործածվում է ընտրվածներից մէկն ու մէկին հաստատելու, արդէն ընտրվածներից մէկն ու մէկին՝ բաց տեղի վրա կարգելու մտքով, այլ ոչ թէ ընտրական գործողութիւնը վերացնելու մտքով։

Ընտրութիւնը, ընտրական սկզբունքը մեր եկեղեցու էն օրէնքը և հիմնական օրէնքն է, որ ճանաչված է պետութիւնից ու որով ներքնօրէն կառավարվելու պարտաւորութիւնը հաստատված է նոյն պետութիւնից։

Այս մասին երկու կարծիք լինել չէ կարող։ Այն կաթողիկոսը, այն առաջնորդը, որ չէ ճանաչում մեր եկեղեցու ընտրական սկզբունքը, որ չէ հրահանգվում մեր եկեղեցու օրէնքով, նա ոչ միայն մեր եկեղեցու օրէնքի, այլ և նոյնիսկ ռուս օրէնսդրութեան, հէնց «Պոլոժենիէի» հարազատ տեսակէտից՝ զանցառուներ, օրինազանցներ են։

Թագաւոր Կայսրը նշանակում է կաթողիկոսին, նշանակում է թեմակալ առաջնորդներին, բայց դրանց ընտրութիւնը կատարվում է մեր եկեղեցու օրէնքներով։

Թեմակալ առաջնորդները նշանակում են սրբազնագործ պաշտօնեաներին, բայց սրանց ընտրութիւնը կատարվում է մեր եկեղեցու օրէնքներով։

Նշանակելու եւ ընտրելու գործառնութիւնները միմեանցից տարբեր են։

«Պոլոժենիէն» այս տարբերութիւնը ճանաչել է եւ պահել է. տարաբաղդաբար մենք ենք, որ չենք հասկացել, չենք պահել, չենք գործադրել այն սահմանը, որ այսօր անցեալի մեր սխալ գործառնութիւնը մեր աչքում բռնել է օրէնքի տեղ...

Շնորհիւ անցեալի մեր սխալ գործառնութեան՝ մենք կարծում ենք, թէ «Պոլոժենիէն» է մեղաւոր, որ մեր թեմակալ առաջնորդները էն յետին տգէտ, կամազուրկ, անգոյն քահանային ականջից բռնած բերում կօնսիստորիայի անդամ են նշանակում և կամեցած րոպէին վզակոթին տալով դուրս են ձգում։ Այն ինչ՝ «Պոլոժենիէն» հէնց այդ խնդրում շատ պարզ, ուղիղ ու որոշ կերպով կօնսիստորիայի անդամի ընտրելու և նշանակելու պարագաները անխախտ կերպով պատկերացրել է։

«Պոլոժենիէի» 1184-դ յօդուածը սահմանում է. «Հայ Լուսաւորչական կօնսիստորիաների անդամները նշանակվում են թեմակալ առաջնորդներից, որոնք նրանց ընտրութեան մասին հաղորդում են ի գիտութիւն Էջմիածնի հայ-լուսաւորչական սինօդի»։

Այս յօդուածի մէջ յիշատակված են նշանակելու և ընտրելու գործողութիւնները. իսկ այս երկու իրարից տարբեր գործողութիւնները, իրաւունքները միևնոյն անձին չեն կարող պատկանել։ Նախ՝ այն պատճառով, որ դա մեր եկեղեցու օրէնքներին հակառակ է. երկրորդ՝ այն պատճառով, որ «Պոլոժենիէի» մէջ հէնց այդ գործողութիւնների ու իրաւունքների ինստանցիաները որոշված են, և վերջապէս երրորդ պատճառը՝ «ընտրութիւն» (избраніе) խօսքը հաւաքական իմաստ ունի. մի մարդը չէ, այլ մարդկանց ժողովն է, որ ընտրութիւն պիտի կատարի։

Ուրեմն 1184-դ յօդուածի հիման վրա կօնսիստորիաների անդամները պիտի ընտրվեն. իսկ այս ընտրվածներին պաշտօնի է նշանակում թեմակալ առաջնորդը և նոյն այս ընտրվածների մասին հաղորդում է ի գիտութիւն սինօդի նոյն առաջնորդը, այլ ոչ թէ համ ընտրում է, համ նշանակում է, համ էլ տեղեկացնում է սինօդին, ինչպէս տարաբաղդաբար կատարվել է մինչև այսօր և կատարվում է նաև մեր օրերում։

Ի՞նչ անի «Պոլոժենիէն», որ ոչ հմուտ և հաւատարիմ կարդացող, ոչ հասկացող և ոչ էլ գործադրող է ունեցել։

Եթէ մեր օրերում մի առաջնորդ վեր կենայ և կամենայ «Պոլոժենիէի» հէնց պարզ ցուցման համաձայն կօնսիստորիայի անդամների ընտրութիւն կատարել տալ թեմական ժողովի միջոցով, այո, անշուշտ կը լինեն մարդիկ, որոնք կը տարածեն, թէ կառավարական այս կամ այն պաշտօնեան արգելել է. բայց միթէ պէտք է կամ կարելի է հաւատալ։ Ոչ միայն չը պէտք է հաւատալ, այլ եթէ նոյնիսկ լինեն այդպիսի արգելող փորձեր, պէտք է արդարութիւնը, մեր եկեղեցու օրէնքը, պետութիւնից մեզ տրված «Պոլոժենիէի» մեր եկեղեցու օրէնքների համապատասխանութիւնը մինչև վերջը պաշտպանենք ամեն օրինական միջոցներով։ Առանց ընտրութեան պաշտօն ստանձնելը դաւաճանութիւն է մեր եկեղեցու առաքելադիր ընտրական ոգու դէմ և բնաւ աննամապատասխան նոյնիսկ «Պոլոժենիէի» սահմանումներին։

Մեր թեմակալ առաջնորդները, մեր կօնսիստորիաների անդամները պէտք է ընտրվեն և միմիայն այս ընտրվածներից պէտք է նշանակվեն։

Մեսրոպ ա.-ք. Միլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսի ազգաբնակութիւնը վերջին տարիները աւելացել է մօտ 100,000 նոր մարդկանցով, և միւս կողմից ուշադրութեան առնելով, որ գոյութիւն ունեցող 24 դեղատները չեն կարողանում պահանջին գոհացումներ տալ, խնդիրքներ են տրված բանալու քաղաքում նոր 6 դեղատուն։

◆ Այս տարի Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը շատ քիչ տեղերի այգեպաններից խնդիրներ ստացաւ խաղողի բժշկութեան միջոցներ ուղարկելու համար։ Դա բացատրվում է նրանով, որ անցեալ ձմեռ խաղողի բազմաթիւ որթեր փչացան անսովոր սառնամանիքներից։

◆ «Հօրիզոնը» հաղորդում է, որ Շուշու թեմի կառավարիչ Զաւէն վարդապետը մտադիր է Շուշում հայերէն թերթ հրատարակել։

◆ Էջմիածնից «Լոյս» շաբաթաթերթին գրում են, որ Սուքիաս արքեպ. Պարզեան մտադրութիւն ունի այցելել Նոր-Նախիջևան ներկայ գտնվելու թեմական դպրանոցի 30-ամեայ և Խաչ. ա.-քահ. Զարիֆեանի 50-ամեայ քահանայագործութեան յօբելեաններին։

◆ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ստ. Մալխասեանցի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը յիշեալ դպրոցում լրացաւ այս տարի։ Մալխասեանցը, լինելով չափազանց զբաղված թէ իբր տեսուչ Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցի և թէ հին մատենագիրների հրատարակութեան բարդ գործով, ներկայացրեց դպրոցի վարչութեան անունով հրաժարականի խնդրագիր։

◆ Թիֆլիսի հրդեհաշէջների կայանին կից շուտափոյթ օգնութիւն հասցնող ընկերութիւնը արդէն կարգին կարգաւորել է ինչպէս շուտափոյթ օգնութեան կառքը, այնպէս և բժիշկների հերթապահութեան համար որոշված շինութիւնը։ Ձեռք են բերված շուտափոյթ օգնութեան համար անհրաժեշտ բժշկական պարագաներ։

◆ Կարգադրված է դադարեցնել ձրի տոմսակներ տալը այն բժիշկ-ուսանողնե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ 1910—1911 ԹՒԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ ԷԿՍԿՈՒՐՍԻԱՆ

VIII*)

Սեւանայ մենաստանը

Գ.

Կիրակի օրվայ պատճառով մօտիկ գիւղերից կղզի են եկել մօտ 10 գիւղացիներ և 2 գեղջկուհիներ։ Դրանցից մէկը ընկնաւոր է, պարբերաբար ուշաթափ ընկնում է գետին և թափահարում մարմնի մասերը։ Ներս էինք մտել եկեղեցի և ունկնդրում էինք ընկերներից մէկի Աստուածաշնչի ընթերցումը, երբ յանկարծ լսում ենք ինչ-որ աղմուկ, թրխկոցներ. ընկնաւոր աղջիկը յատակի վրա պառկած՝ գլխով անդադար հարուածներ էր տալիս սալայատակին. նա հագել էր կեղտոտած կարմիր շորեր, գլխին ծածկած էր սպիտակ լաչակը։ Մազերը ցիրուցան էին, ոտները՝ բոբիկ. աղջիկը քիչ յետոյ կանգնում է. նրան շրջապատում են գիւղացիք, ինչ-որ խօսում են։ Մենք էլ ենք մօտենում և մի կարճահասակ աղօթողի հարցնում բանի էութիւնը. նա նշանակալից և խորհրդաւոր սկսում է պատմել, որ աղջիկը գիշերը երազ է տեսել. Աստուածածինը երևացել է և յայտնել, որ մարդիկ այժմ էլ չեն վախենում Աստուծուց, կորցրել են իրանց հաւատը, ծաղրում են սրբութիւնները, արհամարհում են և չեն իրագործում Աստուծու պատուիրանները. և դրա համար Աստուած շատ է բարկացել, մտադիր է ոչնչացնել և՛ մարդկանց, և՛ աշխարհը... Լրջօրէն և ջերմեռանդ հաւատով լսեցին, կարճահասակ մարդը երկար խօսեց աղջկայ երազի մասին. նրա պատմածի մէջ մենք նկատեցինք կարճահասակ մարդու սեփական հիւանդոտ երևակայութեան արգասիքները և մօտեցանք ընկնաւոր աղջկան, անմիջապէս նրանից լսելու համար։ Աղջիկը խօսում էր դանդաղ, կակազելով և երկար ընդմիջումներով։ Երկար լսելուց յետոյ համոզվեցինք, որ կարճահասակ մարդը իսկութեամբ է հաղորդել աղջկայ երազը և Աստուածամօր յայտնութիւնը։ Տխուր մտատանջութիւնների մէջ, մենք մօտենում ենք եօթն երգիչ ընկերներին և լսում նրանց երգեցողութիւնը։ Շատ պակասութիւններ ունէր այդ երգեցողութիւնը. երգիչների մեծամասնութիւնը բասեր էին, արական թաւ ձայն ունեցողներ, երկուսը տենոր էին, արական բարձր ձայնով, մէկն էլ սիրող երգիչ. այդպիսի խայտաբղէտ և թերի խմբի երգեցողութիւնը, յամենայն դէպս, թողեց հաճելի տպաւորութիւն աղօթողների վրա, որոնք ժամերգութեան աւարտման միջոցին և յետոյ շնորհակալութիւն յայտնեցին երգիչներին։ Ժամը 1-ի մօտերը մենք դուրս եկանք Սևանի եկեղեցուց, որի զանգակատունը 1903 թւին է կառուցված սև փոքր քարերից։ Ընկնաւոր աղջիկը վերստին դանդաղօրէն և ընդմիջումներով պատմում էր իր գիշերային երազի մասին, մարդկանց բարքերի ապականման և աշխարհքի մօտալուտ վախճանի մասին. նրան լսում էին կարճահասակ մարդը և ուրիշները և չէին յագենում Աստուածամօր յայտնութեան պատմութիւնից։

Եկեղեցուն մօտ տեսնում ենք թանգագին մարմարեայ շիրիմը Յօբրունեան իշխանների, որոնք անցեալ դարի առաջին կէսում նպաստներով օժանդակել են մենաստանին։

Նորից ժողովվում ենք մեզ յատկացված սենեակներում և սպասում ճաշի։ Ժամ ու կէս յետոյ ստանում ենք շատ աղի ձուկ և շատ անալի փլաւ։ Հայր տեսուչը ներողութիւն է խնդրում շատ աղի և անալի կերակուրների համար և յայտնում է, որ ճաշն արդէն պատրաստ է եղել, երբ մենք եկել ենք, և որ վաղը մեզ համար յատուկ ճաշ կը լինի պատրաստված։ Մենք շնորհակալութիւն ենք յայտնում այդ հոգացողութեան համար և մի կերպ կշտանում ենք հացով և պանրով։ Ընկերները պառկում են հանգստանալու և անցած անմոռանալի անքուն գիշերվայ թերին լրացնելու։

Կէս ժամ ննջելուց յետոյ ես լուացվում եմ և գնում սրբազանի մօտ։

Դ.

Սարգիս սրբազանը 15 տարի է, ինչ վանահայր է Սևանայ մենաստանի։

Այդ տասնհինգ տարվայ ընթացքում է մենաստանը ստացել իր արտաքին գեղեցկութիւնը. հին, խարխուլ, ցածրայարկ և անձրևից անպաշտպան վանական խուցերին այժմ փոխարինել են գեղեցիկ շինութիւններ, շինված՝ քար ու կրով և տանիքները ծածկված թիթեղներով. բացի հների բարենորոգումներից, կառուցված են բոլորովին նոր շէնքեր. 1897—8 թւականին շինված է դպրոցի շէնքը վեց դասարաններով, շուշեցի Ա. Ղուկասեանի ծախքով. (18,000 րուբլի է նստել)։ 1901 թւին կառուցված է վանահօր կացարանը, որի մէջ մտնում են մատենադարանը և թանգարանը։ Դրանից մի տարի առաջ կառուցված է հիւրանոցը (15 սենեակ) և մառանատունը։ Այս բոլոր շէնքերը թողնում են շատ հաճելի տպաւորութիւն և Սևանայ կղզին նմանեցնում են սուրբ Ղազարի կղզուն։ Միայն արտաքին նմանութիւն։ Երկու օրվայ ընթացքում մենք բաւականին ծանօթացանք այդ գեղեցիկ արտաքինի տակ ծածկվող ներքինին՝ վանականներին։ Այս վանականների մասին կարելի է ասել այն, ինչ որ ասել է միջնադարեան մի հեղինակ իր ժամանակակից վանականների մասին. «Պաս պահելուց հատել էր նրանց բերանները»։ Անշուշտ բառացի հասկանալու չէ այս նախադասութիւնը։

Սևանայ մենաստանում այժմ կան 20 միաբաններ. բացի սրբազան վանահօրից կան 6 վարդապետներ. մնացածները սարկաւագներ և դպիրներ են, որոնք պատրաստվում են գիւղական քահանաներ լինելու։ Այս վանականները ամենայն օր անխափան հինգ անգամ գնում են եկեղեցի. բացի դրանից, նրանցից իւրաքանչիւրն ունի մի որոշ պաշտօն. մէկը տնտես է, միւսը հիւրընկալ է, երրորդը մառանապետ է, և այլն։ Գրականութեամբ և բանասիրութեամբ, որոնք նրանց անմիջական զբաղմունքի նիւթը պէտք է լինէին՝ քչերն են պարապում։ Այդ քչերն են՝ Սարգիս սրբազանը, Խորէն վարդապետը և Արշակ սարկաւագ Ծովինեանը։ Վերջին երկուսը միայն հետաքրքրվում են լրագրութեամբ, կարդում են թերթերը, բայց չեն պարապում բանասիրութեամբ. միայն սրբազան վանահայրն է, որ ունի գրական մի քանի աշխատութիւններ և այժմս էլ եռանդով աշխատում է։ Ի միջի այլոց նա մտադիր է մօտ ապագայում առանձին գրքով լոյս ընծայել Սևանայ անապատի պատմութիւնը, որ մաս-մաս տպվել է պարբերական հրատարակութիւնների մէջ («Հովիւ», 1906 թ.)։ Այդ նոր հրատարակութեան մէջ անշուշտ մտնելու է և վերջին 15 տարվայ շինարարական պատմութիւնը, որին յաջորդող ապագայ 15 տարվայ պատմութիւնը լինելու է վերջնական գեղեցկացումն և ներքին կեանքի բարենորոգումները։

Ներկայ վանահօրը, առանց սխալվելու և չափազանցութեանց մէջ ընկնելու, կարելի է կոչել Սևանայ անապատի «շինողը», որովհետև նրա ջանքերով և նրա օրօք է տեղի ունեցել անապատի գեղեցկացումն։

Ե.

Սևանայ մենաստանը նման չէ միւս վանքերին. իր ներքին գործերում նա բոլորովին անկախ է. այդ անրին, որոնք ճանապարհորդում են անդրկովկասեան երկաթուղիներով։

---

*) Տես «Մշակ» №№ 134, 143, 144, 149.

◆ Թիֆլիսաբնակ Հայկ Մելիք-Բաբախանեանին և Գրիգոր Նալբանդեանին թոյլատրված է բանալ աւտոմօբիլային երթևեկութիւն Թիֆլիսի ու Վլադիկավկազի, Թիֆլիսի ու Թելաւի և Թիֆլիսի ու Մանգլիսի միջև ընդհանուր հիմունքներով։

◆ Թիֆլիսում այս յուլիսին զարմանալի եղանակ է անում։ Սովորաբար յուլիսը ամենաշոգ ամիսն է համարվել Թիֆլիսում. սակայն այս տարվայ յուլիսը շատ զով է անցնում, իսկ գիշերները այնպիսի քամի է, որ փողոց դուրս ելնողը ունենալու է ամարային վերարկու։

◆ Թիֆլիսի հացթուխները մի քանի անգամ հեռագիրներ ներկայացրին քաղ. վարչութեանը այն մասին, որ երբ ալիւրի գինը զանազան քաղաքներում բարձրացել է։ Սակայն առևտրա-տնտեսական մարմնի կառավարիչը իր կողմից տեղեկութիւններ է ստանում ալիւրի գլխաւոր պահեստատեղիներից, որ ալիւրի գների ժամանակաւոր բարձրացումը միայն ժամանակաւոր բնոյթ ունի։ Այնպէս որ պէտք է սպասել, որ քաղաքային տնտեսական մասնաժողովը տեղին չէ գտել աւելացնելու հացի սակագինը։

◆ Յուլիսի 12-ին, Բախկալնայա փող. թիֆլիսեցի Գարսօ Տվարչալարիձէն արբած ժամանակ դանակով երկու ծանր վէրք հասցրեց իր աշակերտ՝ 19 տարեկան Արշակ Մատասեանին փորից և կրծքից։ Վիրաւորվածի դրութիւնը անյուսալի է։ Յանցագործը կալանաւորված է։

◆ Մեծ-Ղարաքիլիսայից մեզ գրում են, որ եղանակը վերջին օրերը անձրևային է դարձել։

◆ Ներկայումս եղջիւրաւոր անասունների ժանտախտ գոյութիւն ունի Երևանեան նահ. Նիկիտօվկա գիւղում։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան այն մի քանի անդամները, որոնք յուլիսի 9-ին մեկնեցին Ալևի գիւղը իշխ. Կ. Ամիրեջիբիի կալուածքը նրա գիւղատնտեսութեան և հիմնած գործնական դպրոցի պարապմունքները դիտելու համար, արդէն վերադարձան Թիֆլիս։ Ընկերութեան անդամների վրա բոլոր տեսածները նպաստաւոր տպաւորութիւն են թողել։

◆ «Սախալխօ Գազէթի» թերթին գրում են Քութայիսից, որ մի ամսից ի վեր կատարեալ երաշտ է։ Շրջակայ գիւղերի ցանքսերը փչանում են ջրի պակասութիւնից և արտերը դեղնել են։ Եգիպտացորենի գները բարձրացել են. պուդը ծախվում է մի ռուբլով, իսկ վարունգի մի հատը մէկ կօպէկով, այն էլ դառնահամ։

◆ Գօրու գաւառի Խիդիսթաւի գիւղին այցելութիւն է տուել Թիֆլիսի նահանգապետ Ս. Զէրնեավսկին, համաձայն գեղջուկների խնդրանքի, դիտելու այն ճահիճները, որոնք գոյացել են գիւղի շրջակայքում երկաթուղագիծը անցկացնելուց յետոյ։ Գիւղացիները խնդրում են կառավարութիւնից միջոցներ ձեռք առնել ճահճային տեղերը ոչնչացնելու համար, որոնք գոյացել են երկաթուղագծի շնորհիւ առաջացած գուբերում։ Նահանգապետը լսել է նմանապէս պետական հողերի մասին, որոնք այնքան շատ են, որ գիւղացիները չեն հասցնում նրանց մշակումը. նրանք խնդրել են աւելորդ հողերը յանձնել հողազուրկ գիւղացիներին։ Նահանգապետը խոստացել է իր աջակցութիւնը։

◆ «Սախալխօ Գազէթի» լրագրում է. Կախին մի գրութեամբ հասարակութեան ուշադրութիւնն է հրաւիրում այն անպատուաբեր և դատապարտելի անտարբերութեան վրա, որի շնորհիւ ամենավատթար վիճակի մէջ է գտնվում ռազմավիրական ճանապարհի վրա գտնվող Անանուր գիւղի հնադարեան եկեղեցին և ամրոցը, որոնք կառուցված են Վրաստանի ամենախելամիտ Մեծն Թամար թագուհու օրով։ Է. Կախին ասելով, հնադարեան եկեղեցին իրանից մի կատարեալ աղբանոց է ներկայացնում. չը նայած որ գիւղն ունի քահանայ և երէցփոխ, սրանք այնուամենայնիւ իրանց պարտականութիւնը չեն համարում գէթ եկեղեցին մաքուր դրութեան մէջ պահել, եթէ հնարաւորութիւնից զուրկ են աննշան վերանորոգութիւններ կատարելուց։ Յիշեալ գրութեան հեղինակը յորդորում է վրացի հասարակութեան ուշադրութիւն դարձնել պապենական աւանդների պահպանման վրա և թոյլ չը տալ, որ օտարազգի հետաքրքրվողները յանդիմանութիւն կարդան և կարմրեցնեն վրացիներին, դատապարտելով նրանց անտարբերութիւնը, որ ցոյց են տալիս դէպի իրանց դարաւոր և պապենական աւանդները։

◆ «Սախալխօ Գազէթի» թերթը հաղորդում է, որ Կուկիայի ուղղափառների գերեզմանատանը անցեալ տարի թաղված Եղիսաբէթ Օսիպօվայի գերեզմանի շուրջը շիրիմ կանգնեցնելու համար հիմք փորելու ժամանակ, մշակները գտել են մի քանի ռումբ, որի մասին յայտնել են ոստիկանութեան, որը քննութեան է ձեռնարկել։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նոր-Բայազէտ, 7 յուլիսի

Յուլիսի 2-ից սկսած ռուսաց դրամատիկ. շրջիկ խումբը, առաջնորդութեամբ Եակօվլև-Օհանովի, մեզանում տուեց մի շարք ներկայացումներ։

Նախ խաղացին (յուլիսի 2-ին) Լիսենկօ-Կոնիչայի «Жертвы Эгоизма» պիէսը 3 գործ. և «Я умеръ» ֆարսը 1 գործ. Մեասնիցկիի։

Ապա ներկայացրին (յուլիսի 3-ին) Ս. Բէլօյի «Поцѣлуй Іуды» դրաման 4 գործ. և «Գօգօլը Նոր-Բայազէտում» 2 գործ.։

Յուլիսի 5-ին ներկայացվեց «На могильной плитѣ», «Անամօթը» (հայերէն) և իբր դիվերտիսմենտ մի քանի վօդևիլներ (օրինակ՝ «Խելագարը» և այլն)։

Բոլոր խաղերին մասնակցում էին պ. պ. Ալեկեվ, Ռօսսին-Զալենսկի, Կալինսկի, Եակօվլև-Օհանով և այլք, ինչպէս և տ. տ. Օհանովա, Մարուսինա և այլք, որոնք բոլորն էլ բարեխղճաբար կատարեցին իրանց դերերը, մանաւանդ տ. Օհանովան, որը իր խելացի խաղով հիացմունք պատճառեց հանդիսականներին։

Պէտք է ասած՝ խումբը ընտրել էր լաւ ժամանակամիջոց մեր քաղաքի վերաբերմամբ, քանի որ ամառայ սեզոնը լինելով՝ կային բաւական թւով ինտելիգենտ անձինք և ուսանողներ, ուստի թատրոնական դահլիճը գրեթէ լիքն էր լինում ամեն անգամ։ Խաղը նոյնպէս սկսվում էր իր նշանակված ժամին, որը հազւագիւտ բան է մեզանում։ Մի բան, որ բարձի-թողի էր արված, դա կարգապահութիւնն էր, քանի որ ոչ ոք իր տեղում չէր նստում։ Հէնց ներկայացման առաջին խաղահանգստին բոլոր հանդիսականները խառն էին նստում. 50—60 կոպէկանոց տոմսակատէրը գնում բազմում էր 1 ռուբլանոց աթոռին, և ընդհակառակն։

Արժէ մի քանի խօսք ասել «Поцѣлуй Іуды» դրամայի մասին։ Այդ պիէսը թէև ժամանակակից է, բայց Նոր-Բայազէտի պէս մի յետ ընկած քաղաքի համար աւելորդ է, քանի որ այդ ներկայացումը իր բովանդակութեամբ մեծ յուզմունք առաջացրեց ժողովրդի ներքին աշխարհում։ Այդպիսի դրամաներ չարժէ ներկայացնել գաւառական խուլ անկիւններում։ Խօսք չը կայ, որ գաւառական ժողովուրդը աւելի լաւ կը կապվէր թատրոնի հետ, եթէ տրվեն պատմական պիէսներ, թէպէտ աւելի ինտելիգենտ դասի համար այդպիսիների դարն էլ անցել է։

Բոլոր ներկայացումներին իր բացակայութեամբ փայլում էր տեղիս վաճառականութիւնը։ Այդ նրանից է, որ խանութներում չէին շրջեցնում տոմսակները ծախելու համար, այլ տոմսակ գնել ցանկացողը պէտք է դիմէր թատրոնի կասսան կամ հիւրանոց, ուր իջևանել էին դրամատիկ. խմբի անդամները։ Իսկ վաճառական դասը ի հարկէ ինքնաբերաբար չէր գնայ տոմսակ վերցնելու, մինչև չը խնդրէին կամ զոռով չը տային նրան։ Այդ տեսակէտից, կարելի է ասել, թատրոնը դեռ ևս պահանջ չէ դառել մեր քաղաքի ժողովրդի մեծամասնութեան համար։

Ֆարս

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսեցիներին յայտնի դերասանուհի Ե. Բրօնսկայա-Մակարօվան ներկայիս ներկայացումներ է տալիս Կիսլօվօդսկի օպերային դահլիճում, որտեղ մեծ աջողութեամբ հանդէս է եկել «Լակմէ» և «Տրավիատա» օպերաներում։

◆ Ամառանոցներից մէկում խաղում էին «Կամելիազարդ տիկինը» պիէսը։ Վերջին գործողութեան ժամանակ այն դերասանը, որ խաղում էր Արման Դիւվալի դերը, մենախօսութեան մէջ գործածեց հետևեալ բառերը. «Իսկ եթէ նա (Մարգարիտան) ընդունէր այս-ինչ դեղահատերը, այն ժամանակ թոքախտից չէր մեռնի», որպիսի նախադասութիւնը յիշեցնում է ամերիկական ձևի ռեկլամ։ Այս դեղահատերը պատրաստվում են Պետերբուրգում, որպիսի դեղահատեր պատրաստող գործարանի ներկայացուցիչը, որը գտնվում էր թատրոնի դահլիճում, միջնարարի ժամանակ անցնելով բեմի վրա՝ շնորհակալութիւն յայտնեց դերասանին, նրա բուռը կոխելով մի ինչ որ։

◆ «Ber. Tag.»-ը հաղորդում է հետևեալը. «Իշխանուհի August Wilhelm-ը այս օրերս գտնվում էր «Նոր թատրոնում», ուր խաղում էին «Ողջախոհ Սուզաննա» օպերետը, որի գլխաւոր դերը կատարում էր տ. Սարրա Պետրազը, որին շատ հաւանել է իշխանուհին։ Սակայն ամենից աւելի իշխանուհուն դուր է եկել դերասանուհու գլխարկ իր մեծութեամբ և գեղեցկութեամբ։ Իշխանուհին իր օթեակը հրաւիրելով դերասանուհուն՝ ամենաջերմ կերպով շնորհաւորել է նրա գեղարուեստական աջողութիւնը, իսկ առանձնապէս գլխարկի արտասովոր աջողութիւնը, խնդրելով նրանից տալ վարպետուհու անունը, որը պատրաստել է յիշեալ գլխարկը։ «Միայն կանայք կարող են որոշել, թէ դերասանուհի Պետրազին որը աւելի դուր եկաւ. նրա գեղարուեստական խաղի գովասանքը թէ գլխարկի նկատմամբ արված գովասանքը»—նկատում է լրագիրը։

◆ «Մուզիկա» հանդէսի ասելով, Մոսկվայի երաժշտական բարձր դպրոցի վերատեսուչ Իպպօլիտօվ-Իվանօվը վերջնականապէս թողնում է իր պաշտօնը և առաջիկայ ընտրութիւնների ժամանակ չի դնի իր թեկնածութիւնը։ Կոնսերվատորիայի այլ և այլ դասատուները տալիս են իրանց թեկնածուների անունները վերատեսչի պաշտօնի համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրիս, 7 յուլիսի

Գօրիսի ծխական դպրոցի միջադէպի առիթով Երևանից Ն. Հայրապետեանի «Մշակի» № 141-ում տպված նամակը կարօտ է մի շարք բաց թողնված, պակաս յիշված և ուղղվելիք կէտերի, առանց որոնց այդ նամակը իր միակողմանիութեամբ աչք կարող է ծակել։

Նախ՝ չէ յիշված, որ ուսուցիչները հոգաբարձութիւնից պահանջել են նաև անցեալ տարիների ռոճիկը, որ դպրոցը պարտ է իր անցեալ և ներկայ կազմերին մօտ 1,450 ռուբլի։

Չէ յիշված, որ ուսուցիչներից ոմանք պայման ունէին մայիսի վերջին մաքրելու իրանց հաշիւները։

Ինքը նամակագիրը մի շարք հրահանգներ է գրել դեռ 1906 թւից մնացած մի ուսուցչի 290 ռ. ռոճկի մասին, իսկ այժմ ինքը հաւատում է հոգաբարձութեան, թէ սա, իր ասելով, ջանք է գործ դնում վճարելու։

Միանգամայն սխալ է, որ մինչև յունիսի 1-ը բոլորի ռոճիկները վճարված են, քանի որ օր. Շ.-եանը դեռ ապրիլի ու մայիսի ռոճիկն էլ չէ ստացել։ Այդ առիթով մեր հոգաբարձուներն անգամ զարմացան նամակագրի համապատասխան տողերը կարդալով։

Չէ յիշված, թէ ուսուցիչները հեռագրով խնդրել էին հին ռոճիկները, կամ նորը և կամ պայման՝ այդ առիթով հոգաբարձութիւնից։ Այլ և տեսչի՝ ոստիկանութեանը դիմելուց յետոյ, երբ ուսուցիչները ինքնակամ կերպով յունիսի 8-ին և 13-ին հոգաբարձութեան տուին վկայականները, և սա ուսուցիչներից ոմանց ներկայութեամբ նոյն ամսի 13-ին բաժանեց աշակերտներին. այդ մասին ևս ոչ մի խօսք։

Գալով ածականներով հարուստ նամակի վերջին դարձուածքին, այստեղ լռել է պէտք, որովհետև նամակագիրը բարձրից է խօսում։ Իսկ թէ «Մշակի» 133-դ համարում իմ թղթակցութիւնը, որի մասին գլխով անգամ կարելի է երաշխաւորել, ինչու է համարվել միակողմանի և գունաւորված, այդ շատ պարզ է. մաքուր հայերէն շատ բան է պարզում. ես իրաւունք չունէի իրեն գրելու, որ շրջանային տեսուչը ուր հարկն է այնտեղ չէ դիմել։

Վերջացնելով խօսքս աւելացնում եմ, որ եթէ Ն. Հայրապետեանի այդ նամակը երկու կողմերի գրութիւնների լուրջ և անաչառ քննութեան հետևանքն է, այդ դէպքում ինձ մնում է իմ վերոյիշեալ ուղղումների սահմանում լռել և աչքեր փակել։

Իմ և պաշտօնակից ընկերների կողմից մեր խորին շնորհակալութիւնը գերապատիւ փոխ-թեմակալին, որ ի նկատի առնելով մեր աւագ ուսուցչի ծայր կարիքաւոր վիճակը՝ իր միջոցներից վճարել է Երևանում նրա մայիս ամսվայ ռոճիկը, որը հոգաբարձութիւնը հնար չունէր տալու (նրա ռոճիկը բաժանված էր 9 ամսվայ վրա)։ Այսքանից յետոյ ես դադարում եմ այդ առիթով խօսելուց, քանի որ քաջը իր փախուստին ծակ չի ասի։

Սաղանդարեան

—

Մոզդոկ, 28 յունիսի

«Մշակի» № 109-ում երևաց «Ես-եմ» ստորագրութեամբ և «Երէցփոխի ընտրութիւն և զանցառու հաշւետուներ» խորագրով Մոզդոկից գրված մի թղթակցութիւն, որ խօսելով մայիսի 6-ին և 7-ին այստեղ կայացած ծխ. ժողովների մասին (ս. Ստեփաննոս եկեղեցու)՝ աղաւաղել է փաստերը և տուել նրանց միակողմանի լուսաբանութիւն՝ շօշափելով ընդ սմին մեր անձնաւորութիւնը։

1) Ես-եմը իր թղթակցութիւնն սկսում է նրանով, որ յայտնում է, թէ մայիսի 6-ին և 7-ին նշանակված է եղել մեր կողմից «ծխ. նոր հոգաբարձուների (?), նոր երէցփոխի և հաշւետուների ընտրութիւն», այն ինչ ամենքին յայտնի է, որ այդ օրը նշանակված էր միայն երէցփոխական ընտրութիւն և հին երէցփոխի հաշիւների ստուգութիւն։

Մեր այս ասածը հաստատվում է հէնց Ես-եմի՝ նոյն թղթակցութեան հետևեալ տողերով. «Ժողովի նախագահը յայտնեց, որ ծխ. ժողով գումարելու նպատակն է եղել երէցփոխի երկու տարվան (1909—1910 թ.) հաշիւները ծխ. ժողովին ներկայացնել և նոր երէցփոխի ընտրութիւն անել»։

2) Բացելով ժողովը, մենք, որպէս պաշտօնակատար գործակալ, առաջարկեցինք ընտրել ժողովի համար նախագահ և քարտուղար։ Թէ նախագահի և թէ քարտուղարի ընտրութիւնը կատարվել է ժողովի յատուկ հաւանութեամբ. մենք, չը նայելով մեր՝ նախագահութիւնից հրաժարվելուն, ստիպված էինք յանձն առնել այդ պաշտօնը ընդհ. ժողովի բուռն ցանկութեամբ։ Ես-եմի գրածն այս հարցի վերաբերմամբ չէ համապատասխանում իրականութեան. ես ոչ թէ մի քանիսի, այլ մեծամասնութեան առաջարկութեամբ եմ նախագահ ընտրվել և երբեք էլ ինքս չեմ ընտրել տիրացու Վարդանեանին քարտուղար։

3) Ծխ. ժողովը նշանակված էր համաձայն գործակալի պաշտօնակատարի յատուկ հրաւիրաթղթերի երկրորդ և վերջին անգամ, ինչպէս այս տեղի է ունենում ամեն տեղ։ Ժողովի օրինաւոր լինելը վաւերացրեց ծխականների ժողովը, այն ինչ Ես-եմի գրածը, թէ իբր ժողովի օրինաւոր լինելը մենք ենք ընդունել, իրականութեանը համապատասխանելուց հեռու է։ Իսկ թէ ինչու, առ հասարակ, ցաւալի երևոյթ է դարձել, որ ամենուրեք, ծխ. ժողովներին, ծխականները տաք շունչով չեն մօտենում գործին և մեծ թւով չեն հաւաքվում ժողովներին, այդ ցաւալի երևոյթի բացատրութիւնը պէտք է փնտռել այն մարդկանց գործելակերպում, որոնք անժամանակ և արհեստական ձևով տարիներով աշխատում են մի անջրպետ բանալ եկեղեցու և ծխականների միջև, աշխատելով հասարակական գործերից ետ քաշվելու տրամադրութիւն ստեղծել և այն սակաւաթիւ մարդկանց մէջ, որոնք իրանց բարոյական պարտքի գիտակցութեամբ և ընդհանուրի հաւանութեամբ ու ընտրութեամբ՝ չեն զլանում իրանց համեստ ծառայութիւնը մատուցանել հասարակաց գործին։

4) Ժողովին ներկայ էին երկու քահանայ։ Ժողովի իրաւունքն էր նախագահ ընտրել այս կամ այն անձին։ Ինչպէս երևաց յետագայում, նախագահ ընտրվելու ցանկութիւն է ունեցել տէր-Խորէնը։ Ցաւում ենք, որ այդ օրը տէր-հայրը ակներև չարտայայտեց իր սրտի փափագը. մենք, չը նայելով ծխականների կրկնակի ընտրութեան, ամենայն յօժարութեամբ կը զիջէինք այդ պաշտօնը տէր-հօրը. մենք մեղաւոր չենք, եթէ ծխ. ժողովը իր իրաւասութեամբ ընտրում է մէկին, և ոչ միւսին։

5) Ինչ վերաբերում է արված այն յայտարարութեան, թէ երէցփոխի հաշիւները իրաւունք չունեն ստուգելու գործակալի պաշտօնակատարը և մի հաշւետես (միւսները միանգամայն բացակայ են եղել), դրան կը պատասխանենք, որ, յիրաւի, շատ ցանկալի է, եթէ ամեն տեղ ընտրված հաշւետեսները ճշգութեամբ իրանց պարտքը կատարեն. իսկ ներկայ դէպքում, հայ եկեղեցու իրաւասութեան տեսակէտից, իւրաքանչիւր անգամ ծխ. ժողովը լիովին իրաւունք ունի իր եկեղեցու հաշիւները աչքի անցկացնելու, ստուգելու, հետևապէս այդ իրաւունքից ոչ ոք չէ կարող զրկել և գործակալի պաշտօնակատարին (այսինքն մեզ)։ Սակայն չը նայելով դրան, յամենայն դէպս, երէցփոխի հաշիւների ստուգութեան և վաւերացման խնդիրը մեր և հաշւետեսի քննութեամբ առաջարկեցինք ծխ. ժողովի վճռին և հաւանութեանը, ինչպէս նաև նոր երէցփոխի ընտրութիւնը, և ծխ. ժողովն է ընդունել ու վաւերացրել ձայների մեծամասնութեամբ թէ ներկայացված հաշիւները և թէ միաձայն նոր երէցփոխի ընտրութիւնը, առանց որ մենք ստիպէինք(?) ժողովին՝ ընդունել այդ հաշիւները։

6) Տէր-Խորէնի գործակալութեան ժամանակ՝ երէցփոխների հաշիւների ստուգութիւնը ձգձգվում էր տարիներով, հաշւետեսների ժողովներ չէին գումարվում և գործակալն իրան արդարացնում էր միշտ նրանով, թէ հաշւետեսները չեն հաւաքվում հաշիւները ստուգելու։ Ուրեմն, ինչպէս երևում է, հաշւետեսներին ի մի հաւաքելն այնքան էլ հեշտ չէ։

7) Ինչ վերաբերում է այն կէտին, որ տէր-Խորէնը առանձին յայտարարութեամբ յայտնել է Աստրախանի վիճակային կոնսիստորիային հաշւետեսների անփութութեան մասին, կը պատասխանենք, որ այդ յայտարարութիւնն էլ տէր-հայրն ուղարկել է ոչ թէ ինքնաբերաբար, այլ մեր տկար եղած ժամանակ՝ այդ կատարել է նա մեր յատուկ յանձնարարութեամբ։

Պաշտօնակատար գործակալ՝
Մ. Կամենկեան

—

Աստրախանի թեմական առաջնորդի հակառակորդներին

Չարջույ, 6 յուլիսի

«Մշակի» № 139-ում Աստրախանից «Մխական» ստորագրութեամբ մի յօդուած կար, որ վերաբերում էր Մխիթար եպիսկոպոսի գործելակերպին, նրա՝ դէպի հասարակական գործերը բանած դիրքին։

Այդ յօդուածը վրդովմունքով լցրեց իմ սիրտը. պարզ կերպով ցոլացնում է իր մէջ

կախութիւնը միայն իրաւական չէ, այլ և տնտեսական. այս անապատը իր հասոյթներից ոչ մի կոպէկ պարտաւոր չէ ուղարկել Էջմիածին, որից և ոչինչ չէ ստանում. իր հասոյթը ամբողջ ծախսում է իր պէտքերի համար։ Վանահայրը այս մենաստանում միևնոյն է, ինչ որ կաթողիկոսը Էջմիածնում. ամեն ինչ նրանից է կախված. տնտեսական բոլոր հաշիւները նրա մօտ են գտնվում. վանքի դատական և այլ գործերը նա է վարում իր լիազօրների միջոցով, նա է կապալով տալիս մենաստանի կալուածները։

Այս կալուածները բաւական շատ են։ Ամբողջ երկու գիւղեր՝ Ցամաքաբերդը և Գոմաձորը վանքինն են. այսինքն այդ գիւղերի հողերը՝ մօտ 450 դեսեատին՝ վանքի սեփականութիւնն են։ Գիւղացիք օգտվում են այդ հողերից, որի փոխարէն որոշ վճար են տալիս։ Ցամաքաբերդի գիւղացիք (գիւղը ունի 565 շունչ) ամեն տարի հոկտեմբերի 1-ին վճարում են 12 խալվար ցորեն և 6 խալվար գարի, որ իւրաքանչիւր հոգուն ընկնում է 25 ֆունտ ցորեն և 13 ֆունտ գարի։ Գոմաձորի գիւղացիք (659 հոգի) պարտաւորված են վճարել բահրա 15 խալվար ցորեն և 6 խալվար գարի. իւրաքանչիւր շնչին ընկնում է 27½ ֆունտ ցորեն և 11 ֆունտ գարի։

Այս բահրան—տուրքը—ժողովում են իրանք վանականները մենաստանի երկու ձիերով (ի դէպ է ասել, որ կղզու վրա վանքը պահում է բացի այդ 2 ձիերից՝ նաև 4 կով, տարիներ առաջ վանքը պահելիս է եղել 20 կով...)։ Այդ հաւաքած ցորենը սպառում են անապատականներն իրանք, իսկ գարու մի մասը վաճառում են։

Բացի հասոյթի այս երկու խոշոր աղբիւրներից, վանքը ունի ուրիշ աղբիւրներ ևս։ Կան ուրիշ հողեր. Թերակղզին, որ խոտատեղ է, իսկ լճափը՝ ձկնարան. գտնվում է Օրդակլու և Ելենովկա գիւղերի միջև. դա կապալով է տրվում տարին 250—300 ռուբլով։ Ծովի մակերևոյթը բարձրանալով՝ թերակղզու տարածութիւնը հետզհետէ փոքրանում է, խոտը քչանում է և ձկնորսութիւնը դժուարանում։

Ցամաքաբերդ գիւղի ծովամասերը փաստաթղթերով պատկանում են մենաստանին, բայց գանձարանն է նրանից օգտվում. սրբազան վանահայրը գործ է յարուցել Փոխարքայի առաջ և մինիստրութեան առաջ՝ որպէսզի մենաստանն ինքն օգտվի իր սեփական կալուածից. այդ գործը վարում էր փաստաբան Տիգրան Յովհաննիսեանը։

Յետոյ՝ Ելենովկա գիւղում մենաստանը ունի կէս դեսեատին բանջարանոց, որ ծառայում է որպէս ցուցական դաշտ. այդ բանջարանոցը մի ժամանակ խնամում էր յայտնի գիւղատնտես Մեծիխօվսկին։ Այժմ այդ ցուցական դաշտը վեց տարով տրված է 15 ռ. կապալով։ Նոյն տեղում մենաստանը ունի մի պանդոկ՝ դվօր, որից 300 ռուբլի է ստանում։ Բացի յիշածներից մենաստանը տարբեր տեղերում ունի մի քանի ջրաղացներ. օրինակ՝ Նոր-Բայազէտի ջրաղացը բերում է 360 ռուբլի։ Երևանում և Թիֆլիսում ունի մի քանի խանութներ և տներ։ Մի այգի էլ Երևանում։

Մենաստանի բոլոր եկամուտների գումարն է 3,000 ռուբլի, որը և ամբողջապէս ծախսվում է վանականների պէտքերի, կալուածների պետական հարկի և պետական ծախսերի վրա։

Գ. Տէր-Ռուբինեան

(Կը շարունակվի)

ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ԽԵԼԱՑԻ ԼՈՒՍՆԻԿԻ ԵՒ ԱՐՔԱՅԱԶՆ ԱՒԱԳԻ ՄԱՍԻՆ

(Ազգագրի յիշատակարանից *)

Վաչէ թագաւորի մինուճար որդի արքայազն Աւագը զուարճութեան և իր մարմինը կազդուրելու նպատակով ամեն օր որսի էր գնում Վաչագան անունով հաւատարիմ ծառայի հետ։ Երեկոները, նստելով գիւղական որևէ խրճիթում, նա հետաքրքրվող անցորդ էր ձևանում՝ ծանօթանում էր ժողովրդի կենցաղավարութեան հետ, իմանում էր նրա պահանջները, հսկում էր դատաւորների գործավարութեան վրա և պարտազանցներին հեռացնում էր, որպէսզի ժողովուրդը լաւ ապրի։

Մի անգամ երկարատև որսորդութիւնից յետոյ՝ յոգնած մօտեցան նրանք մի սառն աղբիւրի, որ ջուր խմեն ու հանգստանան։

Այստեղ շատ աղջիկներ կային... Նրանցից մէկը հէնց այն էր պատրաստվել էր՝ որ ճամբորդներին փարչով ջուր տայ, միւսը յանկարծ փարչը ձեռքից խլեց, ջուրը վեր ածեց, փարչը ինքը ջուր լցրեց ու ողողելով ջուրը թափեց։ Աւագի բերանը չորանում էր, իսկ աղջիկը փարչը մի քանի անգամ ջուր լցնելով ու վեր ածելով, կարծես, ճամբորդների վրա ծիծաղում էր։

Վերջապէս նա նրանց ջուր տուեց։ Սոսկալի ծարաւը կոտրելուց յետոյ խօսեց Աւագը աղջկայ հետ.

— Ինչու ծիծաղում ես դու խեղճ ճամբորդներիս տանջանքների վրա։ Մի՞թէ լաւ է դա։

Աղջիկը պատասխանեց.

— Ես ինքս էլ այդ գիտեմ և երբեք ոչ ոքի վատութիւն չեմ արել. դուք սաստիկ շոգել ու յոգնած էիք. եթէ որ իսկոյն ջուր խմէիք, կարող էիք հիւանդանալ։

Աւագը զարմացաւ աղջկայ խելքին ու սուր հայեացքով նրան նայեց...

Գեղեցիկ էր նա։ Նրա մեծ, ինչպէս գիշեր, սև աչքերը խիտ արտևանունքների տակից՝ ժպտալով փայլում էին... Երկար մազերը փոքրիկ գլխի վրայից օձանման սողում էին, իսկ քիթն ու մուգ-կարմիր շրթունքները նկարչի վրձնին արժանի էին։ Հագնված էր նա պարզ և գեղեցիկ։

— Ո՞վ է քո հայրը և ինչպէս է անունդ, —հարցրեց Աւագը։

— Հայրս հովիւ է, ինձ էլ Լուսնիկ են ասում, —պատասխանեց գեղեցկուհին։—Սակայն քեզ ինչ պէտք էր այդ իմանալ և ծվ ես դու։

Արքայազնը աղջկան ասաց, —թէ յետոյ նա այդ կիմանայ։

Գեղեցկուհին հեռացաւ...

Սրտեր գրաւող խանդավառ սէրը այդ ժամանակից արքայազնի սրտին տիրեց։ Սիրոյ համար ամենքը հաւասար են, հաւասար թէ աղքատ, արքայ թէ հովիւ, բոլորը մէկ են։

Վայ նրան, ով կը խեղդէ իր մէջ առաջին սէրը։

Վերադառնալով տուն, Աւագը նիհարում ու չորանում էր... Հայրը ամեն կողմերից հէքիմներ կանչեց... Բայց ո՞վ կարող էր սիրոյ հիւանդը բժշկել։ Մի՞թէ կարելի է արքայորդուն հովուհու հետ ամուսնանալ։ Սիրոյ միակ դեղն է ժամանակը։

Եւ անցաւ շատ և շատ երկար ժամանակ, մինչև որ կարողացաւ Աւագը լաւանալ։ Նրա հայրը վախճանվեց, սակայն մահվանից առաջ նա կարողացաւ պսակել իր որդուն հարևան թագաւորի աղջկայ հետ։ Իսկ գեղեցկուհի իմաստուն Լուսնիկը ամուսնացաւ մի հովուի հետ, տալով նրան այնպիսի երջանկութիւն, որպիսին Աւագը մինչև մահ չունէր...

Այսպէս է վերջանում այդ պատմութիւնը, ինչպէս շատ ուրիշ սիրահարական պատմութիւններ։

Ս. Ֆարֆօրօվսկի („Эрив. Вѣст.")
Թարգմ. Յար. Խաչատրեան

---

*) Լեգենդա, որը գրի է առնված Գանձակի նահանգի Թարթառ գետի վրա գտնվող Բարդա գիւղում—հայոց Պարտաւ քաղաքի տեղը։

մարդ եակի թշնամութեան պատկերը՝ համեմված պատրուակներով։

Աստրախանի առաջնորդ Մխիթար սրբազանը ընտրված է թեմի հայ ժողովրդից և ոչ թէ նշանակված։

Ընտրողների գերակշռող դերը կատարել են աստրախանցիք։ Սա պարզ և հասկանալի է։ Մի տեղ որ ընտրութիւն կայ, այնտեղ չը պէտք է սխալմունքներ առաջանան։ Ընտրողական օրէնքի ոգին այդ է պահանջում։

Բայց երբ մէկին թեմ. առաջնորդ են ընտրում, իսկ 2—3 տարուց յետոյ բողոքներ բարձրացնում, դա կը նշանակէ, որ ընտրութիւնը գիտակցաբար չէ կատարված։ Անգիտակցաբար քայլեր են գործում տղայամիտներն ու թեթեւամիտները։ Իսկ մեթէ մի ամբողջ թեմի հայութիւնը կարող էր տղայամիտ լինել, յանցանքը գործել՝ ապա «մեղայ» ասել։

Այդ կը նշանակէ՝ թեմ. առաջնորդի միասին չըմբռնել, երեխայական խաղեր սարքել մի լուրջ գործի նկատմամբ։

Ծխականի գրածից երեւում է, որ աստրախանցիք դժգոհ են Մխիթար սրբազանից. մի անգամ բողոքել են, անհետեւանք է մնացել. այս անգամ բողոքում են լրագրութեան մէջ։

Ի՞նչ է սրբազանի յանցանքը ըստ Ծխականի արձանագրութեան. համարեա թէ ոչինչ։ Մեղադրական կէտերը այն չեն ասում, ինչ որ Ծխականը։ Մի քահանայի թոյլ չէ տուել քարոզելու (շատ լաւ է արել. այդ նրա իրաւունքն է), թեմի կրթական գործերը երեսի վրա են թողնված (թող այդ մասին հոգան ճարտար փաստաբանները, բժիշկները և նրանց ստուերի տակ ապրող քահանաները), թեմական դպրոցը 2 բաժանմունք ունի (դրա հոգսը ընկած է հոգաբարձութեան վրա), ներկայացումների համար դպրոցի դահլիճը չէ տրվում (երեւի դրա համար էլ որոշ պատճառ կայ)... Նման խծբծանքներ, որոնցով ուզում են մարդու արատաւորել, վարկաբեկել։

Մեթէ այս մեղադրական կէտերը կրիտիկայի դիմանում են, որոնց հիման վրա կարելի լինէր «ընտրված» առաջնորդին ճանապարհ ցոյց տալ, ուլտիմատում դնել նրա առաջ։

Քա՛ւ լիցի։

Մխիթար սրբազանը երբ չէ ուզում իր կեղծ շրջապատողներին հաւատ ընծայել, ենթարկվել նրանց ազդեցութեան, այդ նրա փայլուն և դրական կողմն է։

Ժողովրդի անունը շահագործողներ շատ կան... Մանաւանդ Աստրախանի հայկական մթնոլորտում։

Ինչե՛ր չէ անում հայի չար նախանձը։ Այսօր ընտրել՝ վաղը տապալել, այսօր ջատագովել՝ վաղը պարսաւել, այդ՝ մեր ազգի ամենացաւոտ կողմն է։

Ո՞ր իրաւունքով և ինչ օրէնքով աստրախանցիք Մխիթար սրբազանին ուզում են հեռացնել։ Արդեօք դրանք թեմի ամբողջ քաղաքների համաձայնութիւնը առել են, թէ իսկի այդ մասին չեն էլ ուզում մտածել... Դա առնուազն յանդգնութիւն է և ապօրէնի գործողութիւն աստրախանցոց կողմից։ Ես, մինը Անդրկասպեան երկրից, բողոքում եմ այդ արարքի դէմ։ Թո՛ղ Ծխականը ցոյց տայ մի առաջնորդի, որ երկնքից աստղեր ցած բերած լինի, կամ իր հասկացողութեամբ՝ օրինակելի դէմք լինի։ Չը կայ ու չը կայ... Տօրիչելեան դատարկութիւն է տիրում մեր թէ հոգեւորականների և թէ ինտելիգենցիայի մէջ։

Մարդիկ ճրագը վերցրած կաթողիկոսացու են փնտռում, իսկ աստրախանցիք իրանց ընտրած առաջնորդի դէմ որոգայթներ են լարում։ Երեւի դա էլ մի նոր տեսակի ազատամտութիւն է։

Խորհուրդ եմ տալիս Աստրախանի կեղծ սրտացաւներին թողնել Մխիթար սրբազանին, և եթէ բարոյական ոյժ կայ մէջները՝ թող իրանք պայծառացնեն թեմը։ Րեկլամներ կարդալը շատ հեշտ է, բայց գործ կատարելը շատ դժուար։ Ծխականի համար թող ականջի օղ լինեն այս վերջին տողերը։

Նորեկ

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԻՑ

Բարքերի անկումը թէ ո՛րպիսի հերկուլեսեան չափերի է հասել մեր մէջ, երեւում է Կարապետ եպ.-ի՝ Մատթէոս վ.-ին ուղղած նամակի վերջին տողերից («Մշակ» № 110). «Խնդիրն այսպէս փակված համարելով իմ կողմից,—գրում է սրբազանը,—չէի կամենայ միայն Մատթէոս վ.-ի մօտ թողած լինել իմ մի ընկերոջ ուղղած այն մասնաւոր նամակը, որ նա իբրեւ կարեւոր փաստաթուղթ է գործածել իր նշանաւոր յօդուածի մէջ։ Թող հաճի ուղարկել խմբագրութեանդ և բացատրել, թէ ինչ կախարդութեամբ իր ձեռն է անցել այդ մասնաւոր նամակը»։

Մամուլի էջերում դեռ սրանից առաջ ակնարկներ եղան, որ Մատթէոս վ.-ը իւրացրել է Կարապետ եպ.-ի, դեռ Կաթողիկոսի կենդանութեան օրով, իր ընկերոջն ուղղած փակ նամակը, սակայն ճշմարիտն ասած՝ մենք դժուարանում էինք հաւատալ, երեւակայել չէինք կարող, թէ Էջմիածնում մեր հայրերն այդքան ստորանալու ընդունակ կը գտնվեն։

Այժմ պարզ է ամեն ինչ, մանաւանդ այն, որ մինչդեռ Մատթէոս վարդապետի անվայել յօդուածի դէմ բողոքեցին մեր հասարակութեան բոլոր խաւերը, լռեց միայն Էջմիածնի միաբանութիւնը. այնտեղ որոշել էին թամաշաչու դերում մնալ. մինչև իսկ վանքի վանահայրը, յանձին սրբազան տեղակալի, Պիղատոսի դերը կամեցաւ կատարած լինել և ձեռքերը լուանալով յետ կանգնեց։ Այլ կերպ լինել կարող չէր. դեռ անցեալ յօդուածումս Մատթէոս վ.-ի դէմ շեշտել էի, որ Մայր Աթոռում չեն վարանում ոչ-ազնիւ միջոցներով պայքարել։ Հեռու չերթանք. յիշենք, թէ ինչպէս 1—2 տարի առաջ միայն՝ այնտեղ մարդկային միտքը խարոյկ բարձրացրին, հրոյ ճարակ դարձնելով Երուանդ նախկին վարդապետի գրուածքը. նորերս էլ լուրեր էին տարածել, թէ Գերմանիայում ուսած մեր վարդապետները բողոքականութիւն են քարոզում մեր մէջ։ Մի յարմար առթի կը գրեմ «Մշակի» ընթերցողների համար, թէ Էջմիածնում ներկայիս հոգեւոր ցենզուրան ի՛նչ չափի է ընդունել և թէ ինչպէս մեր արհիներից մէկը Գէորգեան ճեմարանի ուսուցիչներից մէկի դասագիրքն անարժան է գտել տպագրութեան թողնել, որովհետեւ այնտեղից, իբրեւ թէ, բողոքականութեան հոտ է փչում. Գէորգեան ճեմարանի վարչութեանն եւ այս մտքով դիտողութիւն է արված, որով խախտվել է այդ ուսուցչի դրութիւնն այդ հիմնարկութեան մէջ։ Նոյն ոչ-ազնիւ միջոցների շնորհիւ է, որ այսօր մեղադրեալի նստարանին են բազմել իբր դաշնակցական նրանք, որոնք միայն կռուել են այդ կուսակցութեան դէմ։ Նոյնպէս վերջերս էր, որ Ղազարոս Աղայեանը անհաւատութեան վկայագիր էր տալիս Օրմանեան պատրիարքին, իսկ այսօր էլ պարզվում է, որ Մատթէոս վ.-ը իւրացրել է հակառակորդի նամակը՝ ուղղած իր ընկերոջը, որպէսզի ապագայում իր ձեռքին փաստ ունենայ այդ նամակը, որպէսզի աջողվի տապալել այդ հակառակորդին։ Սա էլ եզուիտական դեվիզի սրբագործումն է. «Նպատակը արդարացնում է միջոցը»։

Ի՞նչ սոսկալի մետամորֆոզա է տեղի է ունեցել մեր բարոյական հասկացողութիւնների մէջ, որչափ մենք արդէն կոխոտել ենք ազնուութեան և անազնուութեան սահմանները, որ անարգել քայլում ենք դրանց մէջ, առանց նշմարելու թէ ուր դրինք մեր ոտքը, առանց զգալու, որ դրանով մենք անազնուութիւնը պարծանք ենք դարձրել, մի փայլուն եարլիկ՝ մեր ճակատին։

Սակայն սա մեդալի մի կողմն է. նայենք միւսին։

Ասենք թէ Մատթէոս վ.-ը չէ զգում իր արարքը. բայց ինչ է մտածում նրա միաբանակից եղբայրութիւնը. ինչո՞ւ է նա Զաքարիայի դերի մէջ մտել. չէ՞ որ ամեն հաստատութիւն, ամեն մի կորպորացիա ունի մի սահման, որից այն կողմն անցնել ոչ ոք իրաւունք չունի, որը խոշոր սրբապղծութիւն է։

Հասարակութիւնը, որն ամենից քիչ կազմակերպված, քաոսային խմբակցութիւններից մէկն է, նա եւ երբ իր անդամներից մէկի մէջ մի ոչ-ազնիւ գործ է նշմարում, դեռ մինչև իսկ չը ստուգած՝ նա հեռու է փախչում նրանից։ Երդուեալ-հաւատարմատարների ընկերակցութեան մէջ, եթէ նրանցից որեւէ մէկը թոյլ է տալիս իրան մի անազնիւ գործ կամ վատնում է իր կլիենտի իրան յանձնած ամենաչնչին գումարը, անմիջապէս դուրս է վտարվում որպէս գառնազգեստ գայլ։

Իսկ ինչ է անում Էջմիածնի միաբանութիւնը. ոչինչ։

Առ-Զէն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Կառավարութիւնը ովկիանոսի ալիքների վրա.—Վերջերս Հիւսիսային Ամերիկայում տաքութեան աստիճանը այնչափ բարձրացաւ, որ այլեւս անհնարին եղաւ ապրել մեծ քաղաքներում։ Այս հանգամանքը հարկադրեց Միացեալ-Պետութիւնների կառավարութեանը, նախագահ Տաֆտի հետ միատեղ, փոխադրվել յածանաւի վրա և այնտեղ զբաղվել պետական գործերով, զովանալով ծովային օդով։ Յածանաւը անդադար շրջում է ովկիանոսի ափունքի ուղղութեամբ, իսկ նաւը ցամաքի հետ հաղորդակցութիւն է պահպանում՝ անթել հեռագրի միջոցով միացված լինելով Սպիտակ Տան հետ։ Տաֆտը ամբողջ օրերով նստած է նաւապետի կամրջակի վրա և ծնկների վրա է ստորագրում ամենակարեւոր թղթերը, ինչպէս, օրինակ, Կանադայի հետ կնքած առեւտրական պայմանագիրը։ Եթէ շոգերը շուտով չը վերջանան, այն ժամանակ այն համագումարը, որ պիտի կայանար օգոստոսին, նիստեր կը գումարէ ոչ թէ Վաշինգտոնում, այլ յածանաւի վրա։

ԹՈՒՐՔԻԱ

Թիւրքիայի դժուարին կացութիւնը Եմէնում. — Ալբանական ապստամբութիւնից զատ, որը կապված է պետութիւնների դիւանագիտական միջամտութիւնների հետ, օսմանեան կառավարութիւնը շատ մտազբաղ է իրերի այն ընթացքով, որի մէջ գտնվում են այժմ Եմէնի գործերը։ Ինչպէս յայտնի է հեռագրերից, Ջիզանի և Լոհայայի մօտերքում Մուհամմէդ-Ալի փաշայի զօրախումբը խայտառակ պարտութիւն կրեց, ենթարկվելով սէյիդ Իդրիսի կողմից յարձակման, որից յետոյ Թիւրքաց «յաղթական» զօրապետը՝ հարկադրված՝ ըսկսեց բանակցել արաբ ապստամբապետի հետ, որը յայտնեց, թէ զէնքերը վայր կը դնի միայն այն դէպքում, եթէ կը ճանաչվի ինքը որպէս Ասիրի էմիր։ Ներկայիս Լոհայան պաշարված է արաբներով և սպասվում է յարձակումը։

Ի նկատի առնելով յուզումնալից այս լուրերը Կ. Պոլսում մտադիր են Արաբիա ուղարկել կրկին 15,000 զօրք, չը նայած որ արաբների դէմ կռիւ մղելը Թիւրքիային շատ սուղ նստեց։ Ապստամբների դէմ կռիւ մղելը դեռ եւս կը խլի երկար ժամանակ։ Այս հանգամանքը աւելի շատ մտատանջութիւն է պատճառում Թիւրք կառավարութեանը, որովհետեւ Եմէնի անաջողութիւնները աննպաստ ազդեցութիւն են թողնում ընդհանուր դրութեան վրա, մանաւորապէս Ալբանիայում, որտեղի ապստամբները ուշադրութեամբ հետեւում են արաբական ապստամբութեան ընթացքին։

Բարենորոգումներ Եմէնում.— «Stamboul»-ը հաղորդում է, որ Եմէնը կը վերածվի երեք վիլայէթների, որոնց կը կառավարէ մի գեներալ-նահանգապետ, որը կունենայ ընդարձակ լիազօրութիւններ։ Նա կը նշանակվի կենտրոնական կառավարութեան կողմից, բայց կարող է գործել բոլորովին ինքնուրոյն կերպով։ Նա կորոշէ բիւջէն, կարգադրութիւններ կանէ եկամուտների նկատմամբ, կը բաժանէ հասարակական աշխատանքները և այլն և այլն։

Եմէնի երեք վիլայէթներն եւ կը կառավարվեն նոյն սիստեմով, ինչպէս և կայսրութեան միւս վիլայէթները, բայց բնիկ տարրը այնտեղ գերակշիռ դեր կը կատարէ վարչական գործերի մէջ։ Համարեա բոլոր եկամուտները կը յատկացվեն տեղական ազգաբնակութեան կարիքներին և բարւոքմանը։ Վարչական բարձր պաշտօնները կը տրվեն այն պաշտօնեաներին, որոնք տիրապետում են արաբական լեզուին։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պարսից նոտան յայտնում է ռուսաց կառավարութեան, որ Պարսկաստանը չի պատասխանի այն վնասների համար, որոնք կարող են ստանալ ռուսահպատակները անկարգութիւնների ժամանակ։

◆ Մահմէդ-Ալին լիակատար ազատութիւն յայտարարեց յեղափոխութեան մէջ բոլոր մասնակցողներին։

◆ Շահի կողմնակիցները ասում են, որ Եւրոպայում նա շատ բան տեսաւ ու լսեց և շատ բան սովորեց և այդպիսով դարձաւ կրթված մարդ։ Այդ տեսակ խոսակցութիւններից մինին միջամտեց Թէհրանի Թիւրքաց դեսպանը ասելով. «Մէկկա բազմաթիւ ուղտեր են գնում, բայց չէ կարելի նրանց աղօթողներ անուանել»...։

◆ Մահմէդ-Ալին տեղեկացրեց Սիփէհդարին, որ նա կարող է առայժմ մնալ Պարսկաստանի առաջին մինիստրի պաշտօնում։

◆ Էկս-շահը անկասկած նախատեսեց Եփրեմի դերը և չը մոռացաւ կովկասեան տարրերի մասնակցութիւնը անցեալ յեղափոխութեան մէջ։ Էկս-շահի եղբայր Սալար-ուդ-Դովլէն հեռագրեց հայոց եպիսկոպոսին, որ հայերը միշտ օգտվել են Պարսկաստանից իբրեւ ապաստան և ապրել են նրա մէջ ազատօրէն։ Այդ պատճառով այժմ նրանք չը պէտք է արգելք լինեն «օրինական կառավարութեան» վերականգնմանը։

◆ Բախտիարների պարագլուխ Սարդար-Ասադը մէջլիսի հեռագրին պատասխանեց, թէ ինքն անկարող է հեռանալ Եւրոպայից. բայց նա հրաման է ուղարկել բոլոր բախտիար խաներին՝ հաւատարիմ մնալ սահմանադրութեանը և պաշտպանել այն։

◆ Մէջլիսը երկրորդ անգամ հեռագրով խնդրեց Սարդար-Ասադին վերադառնալ հայրենիք այս ճգնաժամին։

◆ Այն կարծիքն է տիրում, որ Մահմէդ-Ալի շահը Թէհրան կը մտնէ ուղիղ երկու շաբաթ յետոյ։

◆ Էկս-շահի դէմ ուղարկվում է 120,000 հոգուց բաղկացած զօրամաս թնդանօթներով։

◆ Աւստրիական կառավարութիւնը Ռուսաստանի սիրտը շահելու համար չը դիմադրեց Մահմէդ-Ալիի վերադարձին Պարսկաստան, չը նայած որ նրան շատ լաւ յայտնի էր Մահմէդ-Ալիի գաղտնի գործունէութիւնը։

◆ Կ. Պոլսում հնարաւոր են գտնում, որ Թիւրքիան միջամտէ պարսկական գործերին։

◆ Մակեդոնիայի բազմաթիւ տեղերից տեղեկութիւններ են գալիս յոյն ու բուլղար հրոսակախմբերի մասին։ Ամենուրեք տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ ժանդարմերիայի հետ։ Դրութիւնը չափազանց լուրջ է նկատվում։

◆ Թիւրքիան, տեսնելով որ հնոց է վառվում Մակեդոնիայում, ցոյց է տալիս նշաններ, թէ ուզում է բարենորոգումներ մտցնել այնտեղ։ Օրինակ՝ սա երկու պաշտօնեայ է ուղարկել Մակեդոնիա ազգաբնակութեան գանգատները քննելու համար։ Մինչև օրս բոլոր բողոքները իշխանութիւնների դէմ մնում էին «ձայն բարբառոյ յանապատի»։

◆ Ադրիական ծովում Թիւրքիայի ափերին հսկում են անգլիական, ռուսական և իտալական պատերազմական նաւերը։

◆ Անգլիական «Times»-ը խիստ կերպով պահանջում է, որպէսզի Եւրոպան վանէ վերջապէս անտարբերութեան ոգին և ակտիվ միջամտութիւն ցոյց տայ ալբանական հարցում։

◆ Ծորէսն այցելեց Լիսաբոնում պորտուգալական հիմնադիր ժողովին, ուր նրան ովսաննայով ընդունեցին։

◆ Անգլիայում ամբողջ 21 օր անձրեւներ էին տեղում։ Գիւղատնտեսները չափազանց անհանգիստ են։

◆ Սերբիական Պետր թագաւորի Պարիզ գնալը վճռված է վերջնականապէս և կը կայանայ նոյեմբերին։

◆ Օդեսսայում վախճանված Երանցեվան՝ Պետական Խորհրդի անդամ Սուխոմլինովի քոյրը՝ 3 միլիոն րուբլի է կտակել Օդեսսայում բարձր գիւղատնտեսական ինստիտուտ հիմնելու։

◆ Ա. Գուչկովը «Бирж. Вѣд.»-ի աշխատակցին յայտնեց. «Չինաստանը պատերազմի է պատրաստվում Ճապոնիայի հետ։ Չինական զօրքերը լուրջ կերպով վարժված են. ինչ վերաբերում է չին-ռուսական յարաբերութիւններին, դրանք ներկայիս երկիւղ չեն ներշնչում»։

◆ Մինսկի բանտից այս օրերս արձակեցին ոմն Իսահակ Զելցերին, որ բանտարկութեան մէջ անցրեց ամբողջ 45 տարի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

12 յուլիսի

ՏՕՐԺՕԿ։ Առաւ. ժամը 7 և 50 ր. թռաւ Եանկովսկին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առաւ. ժամը 7-ին թռաւ Սլիւսարէնկօն, որ ընկնելով ջարդել է ոտքերը։

ԱՏԿԱՐՍԿ։ Չեմբզովի շրջանում կարկուտը ոչնչացրել է 1932 դես. հացահատիկ։

ԿՐԵՍՏՑԻ։ Ուտոչկինի ընդհանուր դրութիւնը լուրջ երկիւղ չէ ներշնչում։

ԲԵԼՕՍՏՕԿ։ Դուբովսկայա փողոցում փլվեց մի տան պատշգամբը. 4 երեխաներ ստացան ջարդուածքներ ոտքերից և ձեռքերից։

ԼՕՁ։ Լանդաուի գործարանում պայթումից վիրաւորվեց մէկը, թեթեւ՝ 3 բանւոր և 1 բանուորուհի։

ՌՕՎՆՕ։ Մի ռումբի պայթումից 4 երեխաներ վնասվեցին։

ՍԱՄԱՐԱ։ Որոշված է անբերրիութեան դէպքում կազմակերպել հասարակական աշխատանքներ զեմստվօյի և քաղաքի հաշւով։

ՄՕՍԿՎԱ։ Նիկոլաեւսկի կայարանում գերանների տակ մնալով սպանվեցին 2 բանւոր, ծանր վիրաւորվեց մի բեռնակիր։

ԳՐԱՑ։ Կէֆլախում վառօդի գործարանում պայթումից սպանվեցին 4 բանւոր։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պոստատար** № 4 գնացքը՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար** № 6 գնացքը՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ. 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պոստատար** № $^{75}/_{76}$՝ 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երեւան մտնելու). Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղարկվում է Երեւան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երեւան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջեւան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երեւան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլեւս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլովօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պոստատար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլովօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլովօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլովօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՕՄ՝ **մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բորժօմ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բորժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պոստատար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր. առ.: **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.: ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պոստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար** № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պոստատար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՈՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պ լ ա ց կ ա ր տ ի գինը:

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Ներքին եւ երեխաների հիւանդութիւններ
Գոլովինսկի, 18, ա. Դոբրժանսկու, Արք. թատրոնի հանդէպ, տելեֆօն № 901.
Հիւանդ. ընդունելութիւնը) 10—12 ժ. առ.) 6—7 ժ. երեկ.
(Խ.հ.կ.) 580. 100—21

ՖԷԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
կատարում է կաշուի տակ սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն, դնում է բանկաներ։ Բժշկութիւն ջղային սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ հոգեկանի, հիմնաւոր բժշկութիւն տրիպերի (սուսանակ), փորձված հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին մանրամասն խորհուրդներ և դեղեր գրաւոր կերպով։ (Ուղարկել 3 րուբլի)։ Մասսաժ, էլեքտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Ծախվում է իր կազմած «Ջղամ. եւ կանանց գաղտնի հիւանդ. բժշկարան» նկարներով և բէյէլատներով։ Գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէն. Тифлисъ Семеновская ул. № 9.
(Կ. Խ.) 160. 50—37

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՇՈՐ ՍԻՒՐՊՐԻԶ
կեանքի մէջ մէկ անգամ !!!
600 ԱՌԱՐԿԱՆԵՐ միայն 3 ր. 90 կ.
1. Շէնք ժամաց.-անկէր՝ ուղիղ ընթացքով, 6 տ. երաշխաւորութեամբ։
2. Կանացի գեղեցիկ մատանի ամերիկ. ադամանդով։
3. Կանացի հրաշագեղ մանեակ բազմաթիւ մարգարիտներով և պատենտային փականով։
4. Կանացի օճեղ եւ էլեգանտ ապարանջան ամերիկ. «Դուբլէ» ոսկուց։
5. Դրպանի օճեղ ճեխասեր՝ 4 առարկայ։
6. Մի օճեղ օղ՝ ամերիկ. ադամանդ. և պատ. փականով։
7. Էլեգանտ եւ օճեղ կաշուէ պորտմոնէ։
8. Ալբոմ՝ 50 հիանալի ձեւաւորումներով։
9. Դ-ր ԿՕԽԻ ծխափող-ապարատ անվնաս ծխելու համար։
10. Միխանիկ. ծալվող մկրատ՝ շիքի փաստ-լեարի մէջ։
11. Նոյնպէս եւ 500-ից աւելի հիանալի եւ օգտակար առարկաներ։
Բոլոր 600 առարկաների համար, հաշւելով և ժամացոյցը, առնում ենք միայն 3 ր. 90 կ. (ժամացոյցն առանձին արժէ նոյն գինը)։
Վերադիր վճ. ուղարկելուց մէկից մինչև 3 գրանքատացի համար հաշւվում է 55 կ., Սիբիր՝ 95 կ.։
Հասցէն՝ О-ву «МЕРКУРІЙ», Лодзь. Я. 46
2ը հաւանածները յետ ենք ընդունում ու փողը վերադարձնում։
(B. 49015) 680. 8—6

Մի փորձված ու հմուտ
Երաժշտութեան ՈՒՍՈՒՑԻ
ցանկանում է խմբապետ-ուսուցչի պաշտօն ունենալ ՄԻՀՐԱՆ Բեսսարաբեայի
մում։ Հասցէն՝ Тифлисъ, Шелковниковска
№ 9. Рубену Тигранянцу.
(Հ.կ.չ.) 718. 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„Մեղանի գիրք" ԱՄՈՒՍԻՆՆԵ ՀԱՄԱՐ
Բովանդակութիւն. 1) Ի՞նչ է ամուսնութիւնը, նրա նպատակը։ 2) Մեղրամսի առողջապահութիւնը։ 3) Դաշտանը։ Մաքրասիրութեան նշանակութիւնը։ 4) Սեռական յարաբերութեան մասին։ 5) Սիրային չափազանցութիւնները։ 6) Սեռական անկարութիւնը՝ և հետեւանք սիրային չափազանցութեան։ 7) Խորհուրդներ կանանց՝ ինչպէս պ ել ամուսնու սէրը։ 8) Խորհուրդներ տղամարդկանց։ 9) Բեղմնաւորութեան մասին։ 10) Բեղմնաւորութեան պայմանները։ 11) Ցղութիւն։ 12) Վերջաբան։ Կազմողն օգտվել է Բօկի, Մէյէրի, Դեբէյ Մանտեգացցայի, Լօկօկի և ուրիշ հեղինակ բժիշկ՝ երի աշխատութիւններից։ Թարգ. Մել.։ Գինն է 30 կ.։ Գումարով գնողներին 40% զեղչ։ Դիմել՝ Կօկանդ, Ս. Սահրատեանին (Кокандъ, Сагратьяну). 720. 2—1

Լոյս տեսաւ
Գ. ՀԱՅԿՈՒՆՈՒ
ԴԵՐՁԱԿ ԱՂՈՒԷՍ
չափածոյ ժողովրդական առած
մանուկների ընթերցման համար
8 գունաւոր պատկերներով։
ԳԻՆԸ 25 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
(օ. մ.) 3—2

ՄՕՍԿՎԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
բնագիտական մասը աւարտած ՀԱՅՈՒՀԻ
փնտռում է ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕ
հայոց դպրոցներում։ Համաձայն է գ
Թիւրքիա։ Դիմել մինչև օգոստոսի 1-ը կ
բելի է այս հասցէով. Вешняки. Казанск
жел. дор. Дача Тупициной. Т. Шамкорь
(օ.մ.) 715. 2—1

Լոյս տեսաւ
Ս. ՉԸՐՔԸՋԵԱՆԻ
Օրմանեանը գրպարտութեան ցանցերում
Գինն է 30 կոպ.
Դիմել «Հովիտ» խմբագրութեան և գր
վաճառներին։ (ա.օ.) 717. 10—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.